



ՎԵԳԱ Ձեռնարկ. Երեխաներն օդանավակայանում

ՏԵՂԱՓՈՒԿՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ
ՈՐԴԵՑՈՒՅՑՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՊԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՎԵԳԱ Ձեռնարկ. Երեխաներն օդանավակայանում

ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՎՏԱՆԳՆԵՐԸ

ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՊԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եվրոպական սահմանային և առափնյա պահպանության գործակալություն

Plac Europejski 6
00-844 Warsaw, Poland
T +48 22 205 95 00
F +48 22 205 95 01

frontex@frontex.europa.eu
www.frontex.europa.eu

© Frontex, 2015
Warsaw, August 2015

Project number: 2015.4294

Printed version:

TT-02-17-558-HY-C
ISBN 978-92-95213-51-7
doi:10.2819/403016

PDF:

TT-02-17-558-HY-N
ISBN 978-92-95213-49-4
doi:10.2819/234110

Frontex, in cooperation with its project partners WCO, IOM and ICMPD, is implementing the EU-funded Eastern Partnership IBM Capacity Building Project. The beneficiary institutions of the project are border and customs authorities of Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine. The project started in year 2014 and will finish in 2017.

The main aim of the project is to facilitate movements of persons and goods in the region, while at the same time maintaining secure borders through the enhancement of inter-agency and international cooperation. The fight against corruption and the respect for human rights will be given the necessary attention.

Ֆրոնտեքսը, ծրագրային մյուս գործընկերների հետ՝ WCO, IOM և ICMPD, իրականացնում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Արևելյան գործընկերության «Սահմանների համալիր կառավարում» կարողությունների հզորացման ծրագիրը: Ծրագրի շահառուներն են Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի սահմանային և մաքսային իշխանության մարմինները: Ծրագիրն սկսվել է 2014թ. և կավարտվի 2017թ.-ին:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել տարածաշրջանում մարդկանց և ապրանքների տեղաշարժին՝ միևնույն ժամանակ պահպանելով սահմանների անվտանգությունը՝ միջգերատեսչական և միջազգային համագործակցության ընդլայնման միջոցով: Անհրաժեշտ ուշադրություն կհատկացվի կոռուպցիայի դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության հարցերին:

This document is not to be taken as an official translation. It has been produced for information and working purposes in the framework of the EU funded project entitled "Eastern Partnership Integrated Border Management Capacity Building Project" led and coordinated by Frontex. Frontex bears no responsibility for any inaccuracies in the translation.

Սույն փաստաթուղթը չի համարվում պաշտոնական թարգմանություն: Այն իրականացվել է տեղեկատվական և աշխատանքային նպատակներով ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՖՐՈՆՏԵՍԻ կողմից իրականացվող և համակարգվող "Արևելյան գործընկերության սահմանների համալիր կառավարում. կարողությունների հզորացում" ծրագրի շրջանակներում: ՖՐՈՆՏԵՍԸ պատասխանատվություն չի կրում թարգմանության մեջ հանդիպող որևէ անճշտության համար:

Բովանդակություն

Ինչպե՞ս օգտվել ձեռնարկից #5

Նախաբան #7

1. Սահմանումներ #11

- 1.1. Երեխա #13
- 1.2. Տեղափոխվող երեխաների վտանգները #13
- 1.3. Ուղեկցվող երեխաներ #16
- 1.4. Առանց ուղեկցության երեխաներ #16
- 1.5. Առանձին երեխաներ #16
- 1.6. Մանկական թրաֆիքինգ #18
- 1.7. Երեխաների ապօրինի փոխադրում #19
- 1.8. Երեխայի լավագույն շահերը #21
- 1.9. Պաշտպանության և ուղղորդման ազգային մեխանիզմներ #22

2. Գործառնական ուղեցույցներ #25

- 2.1. Ներածություն #27
- 2.2. Երեխաների հետ գործ ունենալը #28
- 2.3. Սահմանամերձ տարածքում երեխայի հետ գտնվելիս #31

3. Ողեկցվող և առանձին երեխաներ #33

- 3.1. Առաջին գծի անցման և հետագա հսկողությունը #35
- 3.2. Երկրորդ գծի հսկողությունը #40
- 3.3. Տարանցիկ գոտիներ և մուտքի/ելքի ստուգումներ #46
- 3.4. Վերջնական որոշումներ և ուղղություններ #46



4. Առանց ուղեկցության երեխաներ #49

- 4.1. Առաջին գծի անցման և հետագա հսկողությունը #51
- 4.2. Երկրորդ գծի հսկողությունը #53
- 4.3. Վերջնական որոշումներ և ուղղորդում #55

5. Լրացուցիչ տեղեկություններ #59

- 5.1. Տվյալների հավաքագրում #61
- 5.2. Տվյալների պաշտպանություն #61
- 5.3. Երրորդ երկրների հյուպատոսությունների ներկայացուցիչներ #62
- 5.4. Ավիափոխադրողի՝ առանց ուղեկցողի ճամփորդող երեխաներին առնչվող ընթացակարգերը #63

6. Պաշտպանության և ուղղորդման ազգային մեխանիզմներ #65

7. Տերմինաբանական բառարան #71

Ինչպե՞ս օգտվել ձեռնարկից

Այս ձեռնարկում ներկայացված առաջարկները նպատակ ունեն բարձրացնել սահմանային պահակախմբի սպաների իրագրության աստիճանը եվրոպական Միության արտաքին օդային սահմանը հատող միայնակ, թե ուղեկցվող երեխաների (անչափահասների) վերաբերյալ: Սա կարող է բարելավել օդանավակայաններով տեղափոխվող երեխաների վտանգների հայտնաբերման մեխանիզմը՝ ապահովելով նրանց իրավունքներն ու ամրագրելով հանցավոր սպառնալիքներից նրանց բարեկեցությունը չվտանգելու ընթացակարգերը:

Ձեռնարկը պարունակում է մուտքի, տարանցիկ և ելքի վերահսկման համապատասխան օպերատիվ գործողությունների հրահանգներ, որոնք կիրառելի են նաև այն դեպքերում, երբ երեխաների իրավունքների կամ երեխայի պաշտպանության հարցերով մասնագետ սպաները ներկա չեն տվյալ վայրում: Ուղեցույցները մշտապես փորձում են արտացոլել և ապահովել երեխայի իրավունքների պաշտպանվածության մոտեցումը, հաշվի առնելով նրանց կոնկրետ կարիքները՝ միաժամանակ, նշելով նաև սահմանապահների պարտականությունները:

Այս ձեռնարկը նախատեսված է փորձառու սահմանապահների համար և հիմնված է սահմանին երեխայի շահերի լավագույնս պահպանման և երեխաների պաշտպանության սկզբունքների վրա:

Ուղեցույցները պետք է գործեն՝

- համաձայն հյուրընկալող երկրի սահմանապահ մարմինների ազգային օրենքների և լիազորությունների,
- հաշվի առնելով, որ գործողություններն առաջարկվել են Ֆրոնտեքսի կողմից՝ բոլոր սահմանային հսկիչ ընթացակարգերը պետք է ձեռնարկվեն միևնույն կերպով, որ երեխայի վտանգի տակ լինելը կարող է իրական դառնալ: Դրանից հետո, համաձայն համապատասխան ազգային օրենսդրության՝ թրաֆիքինգի կանխարգելման և դրա



ղեմ պայքարի համար նախատեսված ուղղորդման մեխանիզմ և նախաքննություն կիրականացվի՝ պաշտպանելով խոցելի անձանց, մասնավորապես՝ Երեխայի շահերը, որի առաջնային նկատառումը պետք է լինի *ոչ հարկադիր վերադարձ*¹ սկզբունքի հետ համապատասխանությունը:

Բոլոր ներգրավված սահմանապահներին հորդորվում է ծանոթանալ սույն ուղեցույցներին և իրենց առաջարկությունները կամ մեկնաբանություններն ուղարկել Ֆրոնտեքսի հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեին՝ VEGA.Children@frontex.europa.eu Թեմա՝ «ՎԵԳԱ. Երեխաների ձեռնարկ, մեկնաբանություններ»:

-
- 1 Հարկադիր վերադարձ նշանակում է այն անձանց վտարում, ովքեր իրավունք ունեն փախստական ճանաչվել: Ոչ-հարկադիր վերադարձի սկզբունքն առաջին անգամ ընդունվել է 1951 թ-ին ՄԱԿ-ի փախստականների (CRSR) մասին հողված 33 (1)-ում, որով հաստատվում է, որ «Ստորագրող ոչ մի պետություն փախստականին որևէ կերպ չպետք է վտարի կամ վերադարձնի [“refouler” ֆրանսերեն] սահմանից դեպի այն տարածք, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի պատճառով»:

Նախաբան

Երեխաներն, ընդհանուր առմամբ, կախված տարիքից և հասունության աստիճանից, բռնության ենթարկվելու ավելի մեծ ռիսկի են ենթակա, քան մեծահասակները: Վերջին 20 տարիների ընթացքում միջազգային քրեական ցանցերի կապվածությունն անօրինական արտագաղթի հետ շատ ավելի է բարդ ձևեր է ընդունել: Երեխայի ապօրինի փոխադրման և մանկական թրաֆիքինգի վերաբերյալ ճշգրիտ տվյալների ստացումը դժվար հասանելի է դարձել, բայց վերլուծաբանների մեծ մասը համաձայն է, որ այդ կատեգորիաներում անդրսահմանային հանցագործության աճ է գրանցվել (Միավորված ազգերի գրասենյակի թմրամիջոցների և հանցավորության (UNODC) 2012 թ-ի գլոբալ զեկույցը ցույց է տալիս, որ 2007-2010 թթ-ին հայտնաբերված թրաֆիքինգի զոհերի 27%-ը եղել են երեխաներ, ի տարբերություն 2003-2006 թթ-ի 20%-ի): Եվրոստատի վերջին վիճակագրական ժողովածուն, որը հրապարակվել է 2014 թ-ի հոկտեմբերին, ցույց է տալիս, որ Եվրոպական Միությունում գրանցված թրաֆիքինգի զոհերի ընդհանուր տարեկան թիվը 12-ից 17 տարեկան երեխաների շրջանում 17% է:

Բացի այդ, յուրաքանչյուր երկիր անդրսահմանային հանցագործությունից տուժած երեխաների վերաբերյալ ունի իր սեփական մեկնաբանությունը և դասակարգումը:

Այս համատեքստում, սահմանապահների առաջնային դերն է բացահայտել երեխաներին սպառնացող կոնկրետ վտանգը. սահմանապահները նաև այլ կարևոր դեր ունեն. ապահովել, որ այդ երեխաները, անկախ տարիքից՝ դիմեն համապատասխան մարմիններին և ծառայություններին, որոնք պատասխանատու են նրանց հետագա պաշտպանության և բարեկեցության համար, միաժամանակ, հայտնաբերեն և դադարեցնեն կազմակերպիչների, մաքսանենգների և/կամ թրաֆիքինգի գործողությունները: Այս գործընթացում հաճախ կարևորագույն նշանակություն ունի ոստիկանության ջանքերով միջազգային քրեական ցանցերի ոչնչացումը:



Հանցագործների և նրանց անընդհատ փոփոխվող գործելաճոճը հեշտ չէ պարզել. իմացությունը, թե ինչպես պետք է գտնել այն երեխային, որի անվտանգությունը կոնկրետ վտանգված է, պահանջում է մասնագիտական հմտություններ, ինչը հաճախ կարող է բացակայել Եվրոպական Միության մուտքի բազմաթիվ կետերում: Ավելին, խոցելի երեխաների հետազոտությունը, այդ թվում, նրանց հետ խոսելու ձևը և նրանց դիմելը և, թե ինչպես պետք է նրանց հետ գործ ունենալ, չխախտելով նրանց ազնվությունը, իրավունքները կամ շահերը, մեծ խնդիր է աշխարհի շատ երկրներում, ինչը հետագա մարտահրավերներ է ներկայացնում յուրաքանչյուր սահմանապահ ծառայությանը:

Ֆրոնտեքսի այս ձեռնարկի նպատակն է անդրադառնալ այդ թերություններին և աջակցել առանցքային գործընթացներին՝ կապված ռիսկի տակ գտնվող երեխաների հայտնաբերման և դեպի համապատասխան մարմիններ ուղղորդելու գործողությունների իրականացման հետ: Նախկինում բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել վտանգի տակ գտնվող երեխաների բարեկեցության, պաշտպանության և ուղղորդման վերաբերյալ, բայց դրանցից և ոչ մեկը չի առաջարկել իրավապահ մարմինների հատուկ տարրերի գործնական ուղեցույց: Նրանցից ոչ մեկին չի բացատրվել սահմանային գործունեության հեռանկարները սահմանապահների համար, ովքեր հաճախ առանցքային դեր են խաղում՝ նախաձեռնելով այդ գործընթացները և կազմաքանդելով քրեական կազմակերպությունները:

Այս ձեռնարկի հիմնական նպատակն է բարձրացնել «տեղափոխվող երեխաների պաշտպանության» արդյունավետությունը՝ համապարփակ և գործնական ցուցումների ճանապարհով:

Հիմնվելով Եվրոպայի առաջատար փորձագետների գիտելիքների, ինչպես նաև տասնյակ սահմանապահների կուտակված փորձի վրա, այս ձեռնարկը նշում է մուտքի, տարանցիկ և ելքի վերահսկման յուրաքանչյուր ասպեկտ՝ անօրինական միգրացիայի և օդանավակայաններում անդրսահմանային հանցագործության դեպքերում, որտեղ առկա են երեխաներ:

Սույն նյութերը հատուկ նախատեսված են սահմանապահների համար՝ կիրառելիությունը հեշտացնելու նպատակով և իրավապահ մարմինների խիստ գործողությունների կազմակերպման համար են՝ միաժամանակ, չմոռանալով երեխաների համապատասխան ինտեգրման և նրանց պաշտպանության հարցերը:

Չնայած նրան, որ ձեռնարկը հիֆնականում ուղղված է սահմանապահ ծառայություններին, այն նաև պետք է հետաքրքիր լինի այլ անձանց, սկսած օդանավակայանի և ավիաընկերության, ընդունող կենտրոնների անձնակազմերից, ովքեր թռիչքների ընթացքում պատասխանատու են առանց ուղեկցողի երեխաների և այլ ծառայությունների ու մարմինների անձնակազմերի համար, ինչպես նաև պետական կամ մասնավոր սեկտորի անձանց համար, որոնք կարող են որոշ առաջարկություններ անել, թե ինչպես վարվել դժվարին դեպքում, երբ վտանգված են երեխաները:



ՎԵԳԱ Ձեռնարկ. Երեխաներն օդանավակայանում

1. Սահմանումներ



1. Սահմանումներ

Այս ձեռնարկում օգտագործվում են հետևյալ սահմանումները:

1.1. Երեխա

Ըստ միջազգային և եվրոպական իրավունքի չափանիշների և օրենսդրության, 18 տարեկանից ցածր տարիքի անձը համարվում է երեխա, քանի դեռ օրենքով երեխաների չափահասության ավելի վաղ տարիք չի ընդունվել:

Պայմանականորեն, «անչափահաս» կամ «երեխա» տերմինները կարող են նաև օգտագործվել 18 տարեկանից ցածր որևէ անձ նկարագրելու համար: Շատ ավիաընկերություններ 3 տարեկանից ցածր երեխաներին դասակարգում են որպես «մանուկ»: Իրականում, կարևորը հասկանալն է, թե ով է տվյալ գործում սուբյեկտը, այլ ոչ թե այն՝ ինչպես պետք է կոչել նրան:

Երբ անձի տարիքն անորոշ է և կան պատճառներ հավատալու, որ նա կարող է երեխա լինել, ապա նրան պետք է վերաբերվել որպես այդպիսին, և եթե անհրաժեշտ է, անհապաղ օգնություն, աջակցություն և պաշտպանություն տրամադրել՝ մինչև հնարավոր լինի պատշաճ տարիքային գնահատում անցկացնել (այսինքն, ցածր տարիքի կանխավարկած): Հետևաբար, եթե մանկության կանխավարկածի որևէ կասկած կա, իսկ երեխան բարեկամական հոգածության կարիք ունի, ապա այն միշտ պետք է ապահովվի:

1.2. Տեղափոխվող երեխաների վտանգները

Երեխաները, իրենց բնույթով, ավելի խոցելի են, քան մեծահասակները: Կախված իրենց տարիքից և հասունության աստիճանից, երեխաները, իրենց հիմնական կարիքները հոգալու համար, տարբեր աստիճանով կախված են մեծահասակներից: Որոշ երեխաներ, որոնք ճամփորդում են Եվրոպական Միության արտաքին սահմանով՝ ավելի խոցելի են,



քան մյուսները: Եթե նրանք պատշաճ խնամք և պաշտպանություն չեն ստանում կամ որպես երեխաներ նրանց իրավունքները վտանգված են, ապա նրանք բնորոշում են որպես «վտանգի տակ» գտնվող երեխաներ: Այս երեխաները դառնում են գերակայություն սահմանապահների համար, թեև այդ վճիռը կայացնելը երբեք հեշտ չէ, նույնիսկ նրանց համար, ովքեր առավել փորձառու են այդ ոլորտում:

Միջգերատեսչական աշխատանքային խումբը համաձայնել է Տեղափոխվող² երեխաների այն սահմանման հետ, թե երբ պետք է երեխաները համարվեն «տեղափոխվող»: Խումբը հանդես է եկել հասկացողության լայն բնորոշմամբ՝ ներառելով տարբեր ծագման և զանազան կենսափորձով երեխաներին: Սահմանումը հետևյալն է՝ *«Մի շարք պատճառներով երեխաների տեղաշարժը, կամուրջի թե հարկադիր, երկրի ներսում, կամ դրանից դուրս, առանց իրենց ծնողների կամ ինսամակալ(հոգեբարձու)ների, կարող է նրանց համար տնտեսական կամ սեռական չարաշահումների, արհամարհանքի և բռնության վտանգ առաջացնել (կամ մեծացնել վտանգը): Միգրացիայի արդյունքում երեխաներն ենթարկվում են կոնկրետ ռիսկերի»:*

Վտանգի տակ գտնվող երեխաները, ընդհանուր առմամբ, բնորոշվում են որպես անձիք, որոնք զուրկ են պաշտպանությունից և խնամքից և որոնց հիմնական կարիքներն ու բարեկեցությունը (սնունդ, ջուր, հագուստ, կացարան, դեղորայք և այլն) չեն բավարարվում: Արդյունքում, նրանք կարող են երբեք չհասնել իրենց լիարժեք ֆիզիկական,

2 Տեղափոխվող երեխաների միջգերատեսչական աշխատանքային խումբը հիմնադրվել է 2011 թվականին և ներառում է հետևյալ կազմակերպությունները: Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ILO), Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM), Պլան ինթերնեյշնլ, Սեյվ դը Չիլդրեն, Տերե դես Հոմս միջազգային ֆեդերացիա, Աշխատող երեխաների և երիտասարդների աֆրիկյան շարժում (AMWCY/MAEJT), Երրորդ աշխարհի շրջակա միջավայրի զարգացման գործողություն (ENDA), Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատար (UNHCR), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF) և Վորլդ Վիթն ինթերնեյշնլ:

1. Սահմանումներ

սոցիալական, Էմոցիոնալ կամ մտավոր ներուժին: Այդ իրավիճակներում, նրանք հատկապես խոցելի են և ապօրինի տեղափոխման քրեական հանցախմբերի կամ թրաֆիքինգի ցանցերի կամ նրանց սեփական ծնողների ու ընտանիքի կողմից շահագործման զոհ կարող են դառնալ:

Վտանգի տակ գտնվող երեխաների մեջ են մտնում նաև աղքատության մեջ ապրող երեխաները, որբացած երեխաները, փողոցային կյանքով ապրող, աշխատող երեխաները, երեխաները, որոնք տուժել են զինված հակամարտության ժամանակ և/կամ մանկահասակ զինվորները, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի զոհ դարձած երեխաները, սեռական կամ այլ կերպ շահագործված երեխաները և հաշմանդամություն ունեցող երեխաները: Եղանակները, երբ երեխան կարող է մեկուսացվել, խարանվել կամ խտրականության ենթարկվել գրեթե անսահման են, ինչպես նաև կարող են տարբեր հասարակություններում տարբեր բնույթի լինել:

Երեխաների վրա ազդող սպառնալիքների տեսակները չափազանց բազմազան են (ապօրինի փոխադրում, թրաֆիքինգ՝ լինի դա հարկադիր աշխատանք, մուրացկանության դրդում կամ էլ հարկադրված այլ հանցավոր գործունեություն, և այլն) և բավական դժվար է դրանց դասակարգումը:

Շատ երեխաներ եղել են խոցելիության կամ սպառնալիքի մեկից ավելի իրավիճակներում, որը մեծացնում է նրանց խոցելիության աստիճանը և դժվարեցնում վտանգի մակարդակի բացահայտումը (որպես խոցելիության և սպառնալիքի ֆունկցիա): Օրինակ, առանց ուղեկցողի և ընտանիքից բաժան երեխաները (տե՛ս, Բաժիններ 2.4-ը և 2.5-ը) ճանաչվում են հատկապես խոցելի, որոնք կարող են ենթարկվել թրաֆիքինգի, չարաշահման, բռնության և/կամ շահագործման:

Սովորաբար երեխաները չեն կարող հստակ ձևակերպել կամ բացատրել իրենց մտքերը (ինչպես ընդգծված է ՄԱԿ-ի ՓԳՀ):



1.3. Ուղեկցվող երեխաներ

18 տարեկանից ցածր անձը, որին ուղեկցում է նրա ծնողներից անվազև մեկը կամ իր օրինական/հիմնական առաջնային խնամակալը:

1.4. Առանց ուղեկցության երեխաներ

Առանց ուղեկցողի երեխաները, հայտնի են նաև որպես առանց ուղեկցողի անչափահասներ կամ UAM-ներ, ովքեր բաժան են երկու ծնողներից և այլ ազգականներից կամ պատասխանատու մեծահասակներից և որոնց մասին հոգ չեն տանում՝ մեծահասակները, օրենքը և խնամակալները:

Երեխաները, որոնք լքվել են երկրի տարածք մուտք գործելուց հետո, ինչը կարող է տեղի ունենալ, օրինակ՝ ինքնաթիռի վայրէջք կատարելուց և ժամանման օդանավակայանում ներգաղթի գրասենյանին հասնելու միջև ընկած կարճ ժամանակահատվածում, նույնպես դասվում են առանց ուղեկցողի երեխաների կարգին:

Այս երեխաները պետք է լիարժեք պաշտպանված լինեն, քանի դեռ ըստ օրենքի կամ սովորույթի նրանք չափահասի կողմից խնամվել չեն անվել:

1.5. Առանձին երեխաներ

Առանձին երեխաները նրանք են, ովքեր բաժան են մեկ կամ երկու ծնողներից կամ իրենց նախորդ իրավաբանական կամ առաջնային խնամակալից, բայց ոչ անպայման այլ հարազատներից: Նրանք թվին, հետևաբար, կարող են դասվել այն երեխաները, որոնց ուղեկցում են ընտանիքի այլ չափահաս անդամները (օրինակ՝ հորեղբայրը կամ պապիկը):

Բոլոր երեխաները, մասնավորապես, առավել խոցելիները՝ օրինակ, առանց ուղեկցողի և առանձին երեխաները, իրավունք ունեն ստանալ

1. Սահմանումներ

երաշխավորված պաշտպանություն: Պատասխան միջոցառումները ներառում են՝ պատշաճ նույնացում սահմանին, երբ նրանց ժամանման մասին հայտնի է դառնում տվյալ երկրի իշխանություններին, արագ գրանցում և պոտենցիալ միջազգային պաշտպանության վերաբերյալ որոշման կայացում (այդ թվում, *հետ չվերադարձնելը*) և, անհրաժեշտության դեպքում, ընտանիքի անդամների հետևելը, որտեղ հնարավոր է, կամ խնամակալ և օրինական ներկայացուցիչ նշանակելը, խնամքի և կեցության պայմանների տրամադրում, լիարժեք կրթության, առողջապահական ծառայությունների և համարժեք կենսամակարդակի հասանելիություն, ապաստանի ընթացակարգերի դյուրացում և լրացվող պաշտպանության ձևերի երաշխավորված հասանելություն³:

Այս խմբի խոցելի երեխաներին վերաբերող ցանկացած որոշում ընդունելիս, պետք է հաշվի առնել կոնկրետ դրությունը, ինչպես նաև ազգային և տարածաշրջանային իրավական շրջանակները, փախստականի մասին օրենքը և միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների նորմերը: Երեխայի պաշտպանության և բարօրության սկզբունքները պետք է նույնպես առաջնահերթություն ստանան ներգաղթի սպաների, ոստիկանության և ցանկացած այլ համապատասխան փորձագետների կողմից, որոնք գործ ունեն նրանց հետ, երբ խոսքը վերաբերում է այդ երեխաների բուժմանը:

Անկախ այլ դասակարգումներից, բոլոր երեխաները իրավունք ունեն դիմել ապաստան ստանալու և նրանց լավագույն շահերը որոշելու, գնահատելու և երաշխավորելու համար: Տվյալ երեխայի իրական տարիքի վերաբերյալ կասկածների դեպքում, անհրաժեշտ է ապահովել **ընթացակարգ, որը կուղղորդի նրանց դեպի տարիքի գնահատման հավատարմագրված մարմնի մեխանիզմի կիրառմանը:**

3 Երեխաների իրավունքների Միավորված ազգերի կոմիտեի թիվ 6 ընդհանուր մեկնաբանությունը (2005թ.) առանց ուղեկցողի և իրենց երկրից կամ ծննդավայրից դուրս առանձն երեխաների իրավունքների վերաբերյալ է:



Ըստ Եվրոպական Միության օրենսդրության, միգրացիոն մտահոգությունները և կարգավիճակը չեն կարող մերժման հիմք հանդիսանալ պաշտպանության որևէ միջոցառում իրականացնելու, այդ թվում՝ Եվրոպական Միության անդամ պետություն մուտք գործելու կամ ֆնալու թույլտվության համար:

1.6. Մանկական թրաֆիքինգ

«Մարդկանց թրաֆիքինգի» վերաբերյալ ԵՄ հրահանգը սահմանում է, որ «Մարդկանց թրաֆիքինգ» (ՄԹ) նշանակում է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, թաքցնում կամ ստացում, իսկ երեխաների դեպքում՝ ներառյալ այդ երեխաների վերահսկողության փոխանակում կամ փոխանցում⁴:

Դա կարող է իրականացվել ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարուժանների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով:

Այնուամենայնիվ, մարդկանց առևտրի վերաբերյալ հրահանգի 2(5)-րդ հոդվածը շատ հստակ սահմանում է՝ ՄԹ-ն քրեորեն պատժելի հանցագործություն է, եթե վերջնական նպատակը երեխայի

4 Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի և դրա արդյունքում տուժածների պաշտպանության վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2011 թվականի ապրիլի 5-ի 2011/36/ԵՄ Հրահանգը փոխարինում է խորհրդի 2002/629/ՄԼԳ շրջանակային որոշումը (հոդված 2(1)): 2(3)-րդ հոդվածը սահմանում է, որ շահագործման նպատակները «նվազագույնը ներառում են այլ անձանց մարժնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, այդ թվում մուրացկանությունը, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը (սերվիտուտ), կամ հանցավոր գործունեության շահագործումը կամ մարքսի մասեր կորզելը»:

1. Սահմանումներ

Հահագործումն է, նույնիսկ եթե վերոնշյալ միջոցներից ոչ մեկը չի կիրառվել:

Երեխայի առուվաճառքը չի հանդիսանում բացառապես անդրսահմանային հանցագործություն, քանի որ հանցավոր գործունեության վերջնական նպատակը երեխայի շահագործումն է, երեխաները կարող են առուվաճառքի ենթարկվել ազգային սահմանների շրջանակներում:

Բացի մարդկանց թրաֆիքինգից, տուժած որոշ երեխաներ կարող են նաև այլ տեսակի միջազգային պաշտպանության կարիք ունենալ, օրինակ՝ ապաստանի: Երեխաները, ինչպես մեծահասակները, ունեն *ոչ հարկադիր* վերադարձի նույն իրավունքը: Այս իրավունքները լավագույնս ներկայացված են Եվրոպական Միության մշակած ապաստանի *ձեռքբերման*⁵ վերաբերյալ ձեռնարկում:

1.7. Երեխաների ապօրինի փոխադրում

Երեխաների ապօրինի փոխադրումը հանդիսանում է առուվաճառքի գործողություն. այն ուղղակի կամ անուղղակի ճանապարհով ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ձեռք բերելու նպատակով երեխայի ապօրինի մուտքն է մասնակից պետության տարածք, որտեղ երեխան չի հանդիսանում քաղաքացի կամ մշտական բնակիչ⁶:

5 Երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց որակավորման, որպես միջազգային պաշտպանության շահառուներ, միասնական կարգավիճակով փախստականների կամ օժանդակ պաշտպանության իրավասու անձանց, և շնորհված պաշտպանության բովանդակության չափանիշների վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի 2011/95/ԵՄ հրահանգ (փոփոխված):

6 Հիմք ընդունելով «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան լրացնող «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական մուտքը և փոխադրումն արգելիլ» արձանագրությունը (Պալերմոյի արձանագրությունները 2000 թ.):



Չնայած այն հանգամանքին, որ հանցագործության այդ տեսակը նմանություններ ունի երեխայի առևտրի հետ, այնուամենայնիվ այդ երկու հանցատեսակները չպետք է շփոթել:

- Մարդկանց առևտրի նպատակն է իրականացնել անձի շահագործում, որը դիտվում է որպես հանցագործություն անձի նկատմամբ:
- Անօրինական փոխադրման նպատակն է իրականացնել անձի փոխադրում սահմանից դուրս օրենքները շրջանցելու եղանակով, որը դիտվում է որպես հանցագործություն ընդդեմ պետության ինքնիշխանության:
- Մարդկանց առևտուրը ներառում է մարդկանց շահագործելու դիտավորություն երկիր ժամանելուց հետո, մինչդեռ անօրինական փոխադրողի դերը սովորաբար ավարտվում է, երբ հաճախորդը հասնում է թիրախային երկիր:
- Մարդկանց առևտուր կարող է իրականացվել թե՛ ազգային սահմանների ներսում կամ դրսում, մինչդեռ անօրինական փոխադրման համար պահանջվում է միջսահմանային հատում:
- Երեխայի առևտրի դեպքում, երեխայի մուտքը երկիր կարող է կրել կանոնավոր կամ անկանոն բնույթ, իսկ անօրինական փոխադրումը ընդհանուր առմամբ բնութագրվում է չարտոնված մուտքով:
- Մեծահասակների պարագայում, մարդկանց առևտուրը հիմնականում իրականացվում է պարտադրանքի կիրառմամբ և/կամ խաբեությամբ: Անօրինական փոխադրման դեպքում դա հակառակն է. անօրինական փոխադրման ենթարկվածները գրեթե միշտ համաձայնության մեջ են գտնվում անօրինական փոխադրմամբ զբաղվողների համար: Այնուամենայնիվ, երեխաների դեպքում իրավիճակը շատ ավելի բարդ է: Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոմիտեն (UNCRC) ճանաչում է երեխայի գործունեության մակարդակը, և նաև պարզաբանում, որ այն կախված է երեխայի տարիքից և հատկության աստիճանից: Բացի այդ, իրավաբանորեն, երեխաներին վերաբերող գործողությունների համար պահանջվում է նաև ծնողների համաձայնությունը: Տարբեր հարցեր, ինչպիսիք են երեխայի հատկության աստիճանը և նրա կողմից իրավիճակի հետևանքային ըմբռումը, պահանջում են հետագա ուշադրություն այն դեպքերում, որտեղ ներգրավված են երեխաներ: Ըստ Ինտերպոլի դիտարկումների, մարդկանց առևտրով և անօրինական փոխադրմամբ զբաղվողների

1. Սահմանումներ

գործառնական մեթոդները նման են բազմաթիվ առուճներով, ինչը կարող է շատ ավելի դժվարացնել իրավապահ մարմինների աշխատանքը՝ հանցագործության երկու տեսակները զանազանելու առումով: Շատ դեպքերում մարդկանց առևտուրը և անօրինական փոխադրումը հնարավոր չէ տարբերակել մինչ փոխադրման փուլի ավարտը և շահագործման փուլի մեկնարկը⁷:

Ապաստանի իրավունքը և *ոչ հարկադիր վերադարձի* սկզբունքը կիրառելի են նաև անօրինական փոխադրման ենթարկված երեխաների համար, որոնք միջազգային պաշտպանության կարիք ունեն:

1.8. Երեխայի լավագույն շահերը

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան նախատեսում է՝ *երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ նրանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հաստատությունների, դատական, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի երեխայի լավագույն շահերին*: Յուրաքանչյուր սահմանապահ պետք է գործի, որպես առաջնորդող սկզբունք ընդունելով երեխայի լավագույն շահերը: Երեխայի լավագույն շահերի համար նրանց հուզող բոլոր հարցերում առաջնահերթ ուշադրություն ունենալու անհրաժեշտությունը կարգավորվում է նաև Եվրոպական Միության հիմնարար իրավունքների կանոնադրության 24-րդ հոդվածով:

Երեխաների⁸ իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեն վերջերս հայտարարեց, որ *«երեխայի լավագույն շահերի հայեցակարգը բարդ է և դրա բովանդակությունն անհրաժեշտ է սահմանել ըստ առանձին դեպքի հիմունքներով»*: Երեխայի լավագույն շահերը պետք է որոշվեն երեխայի

⁷ «Մարդկանց առևտուր և մաքսանենգություն» զեկույց 2010-2011 թթ., իրապարակված՝ 2012 թ. մայիսին:

⁸ UNCRC, Ընդհանրի մեկնաբանություն, No 14 (2013):



պաշտպանությամբ զբաղվող իրավասու մարմինների կողմից, երկրի ներսում պահանջվող ընթացակարգերով կոնկրետ դեպքերին արագ լուծում տալու նպատակով: Սահմանապահներն առանցքային դեր ունեն և պետք է անդրադառնան բոլոր այն դեպքերին, որոնք վկայում են երեխային սպառնացող վտանգի մասին և նկարագրված են սույն ձեռնարկում:

Սա պահանջում է հմտություններ, որոնք սահմանապահները սովորաբար չունեն. այստեղ հատկապես պահանջվում է հաշված վայրկյանների ընթացքում արտաքին սահմանային կետերում հայտնաբերել երեխային սպառնացող վտանգը, որը սահմանապահների առջև ծառայած առաջադրանքի բարդությունը առավել կարևոր է դարձնում:

Կարևոր է սահմանապահների կողմից ճկուն մոտեցումների կիրառումը, հատկապես երեխաների մասնակցությամբ դեպքերի պարագայում: Խոցելիության առանձնահատուկ իրավիճակում գտնվող երեխայի շահերը միշտ չէ, որ լավագույնս պաշտպանվում են այնպես, ինչպես նման իրավիճակում գտնվող մեկ այլ երեխայի շահերը: Փորձառու սահմանապահն իրազեկ է, որ երկու դեպք չեն կարող երբևէ նույնը լինել, ուստի երեխաների հետ գործ ունենալիս ցուցաբերում է հատուկ խնամք և հոգատարություն: Ցանկացած որոշում կայացնելուց առաջ անհրաժեշտ է հնարավորին շատ անհատական տեղեկատվություն հավաքագրել երեխայի վիճակի վերաբերյալ:

1.9. Պաշտպանության և ուղղորդման ազգային մեխանիզմներ

Ազգային ուղղորդման մեխանիզմը (NRM) հանդիսանում է համակարգ և մեխանիզմ, որը թույլ է տալիս երկրին կատարել իր պարտավորությունը՝ պաշտպանելու և խթանելու մարդկանց առևտրի ենթարկված և այլ խոցելի անձանց մարդու իրավունքների պաշտպանության ուղղված համակարգված արձագանքի միջոցով՝ հաճախ քաղաքացիական հասարակության հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և ոչ-կառավարական կազմակերպությունների

1. Սահմանումներ

(ՀԿ-ների) մասնագիտացված օժանդակությամբ: Եվրոպական Միության անդամ պետությունների NRM-ների միջև առկա են ընթացակարգային տարբերություններ, սակայն դրանք բոլորն էլ հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ՝ իրականացնել խոցելի անձանց արդյունավետ ուղորդում դեպի լավագույն և առավել համապատասխան աջակցության հասանելի ծառայություն: NRM-ի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Բաժին 7-ը, որը վերաբերում է վտանգված երեխաների բոլոր խմբերին՝ ներառելով ոչ միայն մարդկանց թրաֆիքինգի դեպքերը:



ՎԵԳՎ Ձեռնարկ. Երեխաներն օդանավակայանում

2. Գործառնական ուղեցույցներ



2.1. Ներածություն

Սահմանապահ մարմինները սահմանային հսկողություն իրականացնելիս վճռորոշ հնարավորություն ունեն կանխել հանցագործությունները միջպետական սահմանին, քանի որ օդանավակայանից տուժողների հեռանալու դեպքում հանցագործներին բռնելու և նրանց հանցավոր գործողությունները կանխելու, ինչպես նաև տուժողների հայտնաբերելու և երեխայի պաշտպանությունն իրականացնելու միջոցառումների հնարավորությունը կտրուկ նվազում է: Քանի՞ երեխա-զոհ կարող է լինել այս հանցավոր ցանցերը չոչնչացնելու դեպքում:

Ըստ Եվրոպոլի, օդանավակայանները ներկայումս համարվում են այն ամենահավանական վայրերը, որտեղ կարելի է բացահայտել դեպի Եվրոպական Միության անդամ պետություններ մարդկանց թրաֆիքինգի կամ ապօրինի փոխադրման ենթարկվող երեխաների: Ապօրինի փոխադրմամբ և մարդկանց ամուտրով զբաղվողները նախընտրում են օդանավակայանները և նրանց կողմից առավել տարածված գործելաոճը կեղծ, կեղծված կամ խաբեությամբ ձեռքբերված փաստաթղթերի օգտագործումն է՝ տեղում ամուկ համակարգերը շրջանցելու նպատակով:

Երեխաների մասնակցությամբ սահմանային հանցագործությունների հայտնաբերման դժվարությունը լավ հայտնի փաստ է: Հաճախ է բերվում է այն օրինակը, երբ ոչ կեղծ անձնագրով երեխաները թրաֆիքինգի են ենթարկվել իրենց հետ կապ չունեցող մեծահասակների հետ ճամփորդելիս: Նույնիսկ եթե անձնագրում ամուկ է երեխայի լուսանկարը, նույնացման գործընթացը կարող է բարդանալ՝ պայմանավորված այն փաստով, որ աճման շրջանում երեխաների դեմքերը հակում ունեն միմյանց նմանվելու և որ նրանց դեմքերը, մազերը և նույնիսկ աչքերի գույնը հաճախ կարող են ենթարկվել կտրուկ փոփոխության: Արդյունքում, սահմանապահը կարող է չնկատել, որ իրականում երեխան և չափահասը (անձնագրի իրավատերը) միմյանց հետ կապ չունեն:

Ապօրինի փոխադրմամբ և մարդկանց ամուտրով զբաղվողները սովորաբար փորձում են ժամանել պիկ ժամերին, երբ անձնագրային



հսկողության անցակետում հոսքը առավելագույնի է հասնում. սահմանապահները պետք է իրազեկ լինեն այդ գործելաոճին՝ երեխաներին ավելի լավ պաշտպանելու համար:

Տարիների ընթացքում ՖՐՈՆՏԵՔՍԻ կողմից ձեռք բերված փորձը ցույց է տալիս, որ սահմանի անկանոն հատման փորձի ետևում կարող է թաքնված լինել մարդկանց ապօրինի փոխադրման կամ նրանց առևտրով զբաղվողների հնարավոր փորձը: Սա նշանակում է, որ պետական սահմանին մարդկանց առևտրի բացահայտված ցանկացած դեպք հանդիսանում է խստացված ստուգումների արդյունք, ինչը վերաբերում է նաև երեխաների ներգրավմամբ դեպքերին:

Տեղափոխվող երեխաների վտանգների մասին իրազեկումը բարձրացնելու նպատակով, կարևոր է լավ հարաբերություններ ստեղծել և պահպանել օդանավակայանի իրավապահ մարմինների, ինչպես նաև ոչ-իրավապահ մարմինների՝ օրինակ, ավիաընկերության աշխատակազմի, երեխաների պաշտպանությամբ զբաղվող ծառայությունների աշխատակիցների և այլ խոցելի խմբերի⁹ հետ աշխատող անձանց ու այլ իրավասու մարմինների հետ: Դրան կարելի է հասնել հանդիպումների, համատեղ վերապատրաստման դասընթացների, համատեղ մասնագիտացված խմբերի և այլ միջոցառումների կանոնավոր համակարգման միջոցով:

2.2. Երեխաների հետ գործ ունենալը

Կարևոր է գիտակցել, որ երեխաները հոգեբանորեն տարբերվում են մեծահասակներից, հետևաբար երեխաների հետ գործ ունենալիս անհատական մոտեցում է պահանջվում: Բացի այդ, երեխան կարող է չցանկանալ խոսել օտար անձնավորության հետ և, այսպիսով, երեխայի հետ գործ ունեցող սպան (գերադասելի է քաղաքացիական հագուստով) պետք է գործադրի բոլոր ջանքերը՝ երեխայի մոտ վստահության մթնոլորտ ստեղծելու նպատակով:

⁹ Այդ թվում հավատարմագրված միջազգային կազմակերպություններ և ՀԿ-ներ:

2. Գործառնական ուղեցույցներ

Պատշաճ գործողությունները, որոնք անհրաժեշտ է հիշել երեխաների հետ գործ ունենալիս, ներառում են հետևյալը՝

- Ստեղծել նպաստավոր/ընկերական միջավայր (դա կարող է լինել երեխային հարմարեցված սենյակ¹⁰, եթե առկա է այդպիսին), նվազեցնել լիազորությունների անհավասարությունը (խուսափել ձևականություններից, ուշադրություն դարձնել մարմնի լեզվի/ ժեստերի, խոսքի տոնի, գործածվող տերմինների և այլնի վրա) և թույլ տալ, որ երեխան հարմարվի միջավայրին:
- Բացատրե՛ք գործում ներգրավված/երեխայի հետ զբաղվող մեծահասակի (ների) դերը և աշխատանքը;
- միշտ ասե՛ք ճշմարտությունը;
- լսե՛ք երեխային;
- խոսե՛ք պարզ և խուսափե՛ք տեխնիկական տերմինների գործածությունից (հաշվի առնելով լեզվական խոչընդոտները);
- խոսե՛ք և վարվե՛ք երեխայի տարիքին և հասունությանը համապատասխան;
- փորձե՛ք անել այնպես, որպեսզի երեխան իրեն հարմարավետ զգա;
- կիրառե՛ք անհատական վարվեցողության կանոններ (օրինակ՝ պահպանե՛ք տեսողական կոնտակտ, Ֆագեթ՝ միևնույն մակարդակի վրա):

Երեխաների հետ գործ ունենալու վերաբերյալ հիֆնական տեղեկատվությունը հասանելի է սահմանապահների համար նախատեսված գործնական ձեռնարկում¹¹ և վերաբերում է հետևյալին՝

10 Նկատի ունեցե՛ք, որ համապատասխան սենյակը կարող է ապահովել գաղտնիություն, սակայն բացասաբար ազդել՝ երեխայի վրա. նման սենյակ մտնելը կարող է երկյուղալի լինել: Հետևաբար, համապատասխան սենյակը կարող է լինել միայն մեկը՝ նախապատրաստված նման միջոցառումների համար:

11 Հանձնաժողովի առաջարկությունը՝ ստեղծել ընդհանուր «Գործնական ձեռնարկ սահմանապահների համար (Շենգենյան տեղեկատվական ձեռնարկ)», որը կարող է կիրառվել ԵՄ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից՝ անձանց սահմանային վերահսկողություն իրականացնելիս, C (2006 թ.) 5176 վերջնական, Բրյուսել, 6.10.2006 թ.



Անչափահասներն արժանի են սահմանապահների առանձնահատուկ ուշադրությանը, անկախ նրանից՝ նրանք ճամփորդում են ուղեկցողի հետ, թե ոչ:

Անչափահասների ուղեկցության դեպքում, սահմանապահը պետք է ստուգի անչափահասներին ուղեկցող անձանց ծնողական խնամակալության իրավունքի առկայությունը, հատկապես, երբ անչափահասներին ուղեկցում է միայն մեկ չափահաս անձ և կան լուրջ հիմքեր մտածելու, որ հնարավոր է նրանք ապօրինաբար են բաժանվել իրանց մասին հոգ տանող այն անձից, որն իրավաբանորեն ծնողական խնամակալության իրավունք ունի նրանց նկատմամբ: Այդ պարագայում, սահմանապահը ստիպված է կատարել բոլոր անհրաժեշտ հետաքննությունները՝ առևանգումը կամ բոլոր հանգամանքներում անչափահասի ապօրինի տեղափոխումը կանխելու նպատակով:

Առանց ուղեկցողի ճամփորդող անչափահասներին անհրաժեշտ է զննել, մանրակրկիտ ստուգելով նրանց ճամփորդական և հիֆնավորող փաստաթղթերը՝ համոզվելու, որ նրանք անօրինական չեն հեռանում տարածքից իրենց նկատմամբ ծնողական խնամակալություն ունեցող անձի (անձանց) ցանկություններին հակառակ:

Սահմանապահի գործնական ձեռնարկում շարադրված վերոհիշյալ հանգամանքների վերաբերյալ կասկածների առկայության դեպքում, սահմանապահը պետք է օգտվի ազգային կոնսուլտային կետերի ցանկից՝ անչափահասների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

Թեև Սահմանապահի գործնական ձեռնարկը հստակ մատնանշում է, որ ծնողական խնամակալությունը ուղեկցողի հետ և առանց ուղեկցողի ճանապարհորդող երեխաներին տարբերակելու չափանիշ է, սահմանապահը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ճանապարհորդող բոլոր երեխաներին՝ լինեն նրանք ուղեկցողի հետ, թե առանց ուղեկցության կամ ուղեկցողից առանձին:

Ի լրումն Սահմանապահի գործնական ձեռնարկում նշվող տեղեկատվությանը և Սահմանների մասին Շենգենյան օրենսգրքի, սույն ձեռնարկի հաջորդ գլուխներում սահմանապահներին կտրամադրվեն մանրամասն և հատուկ ցուցումներ, որոնցով պետք է առաջնորդվել՝ երեխաների հետ գործ ունենալիս ու երեխաների անօրինական փոխադրման և թրաֆիքինգի զոհերին տարբերակելու համար:

Ցուցումները կարող են տարբերվել՝ կախված համապատասխան ազգային օրենսդրություններից, սակայն յուրաքանչյուր երեխա պետք է արժանանա հատուկ ուշադրության, իսկ սահմանապահները պետք է տեղեկացված լինեն վտանգված երեխաներին զանազանող հետևյալ նշանների մասին:

Այնուամենայնիվ, այս ցուցումներն ամբողջական չեն. սահմանապահները պետք է նաև տեղեկացված լինեն գործելաճի այն տարբեր ձևերի մասին, որոնք համապատասխանեցվել են իրավապահ մարմինների պատասխանների հետ և առաջին հերթին գիտենան այն, որ երեխան կարող է խնամված լինել, սակայն սթրեսի ազդեցության տակ նրա մարմնի լեզուն հազվադեպ է լիովին թաքցված լինում:

2.3. Սահմանամերձ տարածքում երեխայի հետ գտնվելիս

Սահմանապահները պատասխանատվություն են կրում յուրաքանչյուր այն երեխայի համար, որը գտնվում է սահմանամերձ տարածքում: Գլխավորն այստեղ այն է, որ սահմանապահները պարտավոր են հոգ տանել վտանգված երեխայի մասին՝ մինչև հատուկ պատրաստվածություն ունեցող մասնագետի, երեխաների պաշտպանության ծառայության ներկայացուցչի կամ երեխաների պաշտպանության համար պատասխանատու որևէ այլ մարմնի ներկայացուցչի ժամանումը և այդ պարտականության ստանձնումը:



Ընդհանուր ցուցումները (տարբերվում են ըստ երեխայի տարիքի և հասունության աստիճանի), որոնք կիրառելի են առաջին և/կամ երկրորդ գծի հսկողության համար, բերված են ստորև:

- Հարմարվե՞ք իրավիճակին և երեխային. օգտվե՞ք թղթից և մատիտից՝ նկարելու համար, նստե՞ք հատակին, որպեսզի անկաշկանդ մթնոլորտ ստեղծեք:
- Փորձե՞ք ներգործել բաց հարցերի միջոցով (երեխան պետք է ազատ լինի պատասխանելուց. թույլատրեք պատասխանել, ինչպես ինքն է ուզում; պետք է խուսափել «այո» կամ «ոչ» հարցադրուճներից), հնարավորինս խուսափե՞ք որևէ պատասխան հուշելուց, թույլ տվե՞ք նրան խոսել ազատ և անշտապ: Հարցրե՞ք երեխային՝ արդյո՞ք նա իրեն հարմարավետ է զգում, արդյո՞ք ծարավ է, քաղցած է, մրսում է, շոգում է կամ արտաքնոց գնալու կարիք ունի կամ է՛լ ցանկանում կամ կարիք ունի որևէ այլ բանի, որը կարող եք տրամադրել նրան: Նա կարող է պահանջել իր մորը կամ հորը. այնպես որ, մի՛ տվեք այնպիսի խոստումներ, որոնք չեք կարող կատարել, այլպպես՝ կարող եք կորցնել միմյանց նկատմամբ վստահությունը:
- Հարցրե՞ք երեխային՝ արդյո՞ք բուժօգնության կամ որևէ այլ հատուկ խնամքի կարիք ունի (երեխայի տարիքից կախված՝ կարելի է պարզապես հարցնել՝ արդյո՞ք որևէ տեղ ցավում է): Հնարավոր է նաև հարցնել երեխային ուղեկցող անձնավորությանը՝ արդյո՞ք երեխան բուժօգնության կամ որևէ այլ հատուկ խնամքի կարիք ունի: Տեղեկացված եղե՞ք, որ երեխային ուղեկցող անձը կարող է այս հարցն օգտագործել իր սեփական օգտի համար:
- Փնտրե՞ք ֆասսվածքի կամ որևէ այլ նկատելի հիվանդության նշաններ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հնարավոր բռնության նշաններին (ինչպիսիք են լավացման տարբեր փուլերում գտնվող բազմաթիվ ֆասսվածքների առկայությունը, շատ փոքր երեխաների մոտ՝ դեմքի ֆասսվածքներ, երեխայի գլխի վրա մազազուրկ հատվածները և այլն):
- Երեխային տեղեկացրե՞ք (երկրորդ գծի հսկողության ժամանակ) իրականացվող ընթացակարգի մասին այնպես, որ դա նրան հասկանալի լինի:

3. Ողեկցվող և առանձին երեխաներ



3.1. Առաջին գծի անցման և հետագա հսկողությունը

3.1.1. Իրավիճակը մինչև վերահսկողության գոտի. կա՞րոյոք որևէ կասկածահարույց երևույթ:

Երեխային կարող է ուղեկցել ծնողը, օրինական խնամակալը, (ուղեկցողի հետ ճանապարհորդող երեխա) կամ երրորդ անձ, որը կարող է լինել ընտանիքի չափահաս անդամ, օրինակ՝ քեռին կամ մորաքույրը կամ տատիկը/պապիկը (առանձին երեխա): Մարդիկ իրենց ավելի բնական են պահում, երբ մտածում են, որ իրենց չեն հետևում. ուրե՛մս՝ երեխաների և նրանց ուղեկցող(ներ)ի վարքին հետևելը դեպի անձնագրային ստուգման կետ հատվածում կամ անձնագրային ստուգման կետի դիմաց հերթում սպասելիս, կարող է շատ օգտակար լինել: Ավելի մեծ օդանավակայաններում միշտ արժե դիտարկել քաղաքացիական հագուստով ոստիկանների տեղակայումը:

Սահմանապահները պետք է հոգ տանեն, որպեսզի չանեն ենթադրություններ կամ չդրսևորեն կանխակալ վերաբերմունք՝ մարդկանց դիտելիս: Երեխային և ուղեկցող անձնավորությանը դիտելիս կարևոր է խտրականություն չցուցաբերել՝ մշակութային, կրոնական, ազգային կամ էթնիկ հողի վրա, սեռի կամ այլ հատկանիշներով պայմանավորված: Այնուամենայնիվ, ապաստան խնդրելու ավելի մեծ հավանականություն ունեցող երկրներից/տարածաշրջաններից եկող երեխաներին պետք է լրացուցիչ ուշադրություն դարձվի:

Ցանկացած գնահատման կարևոր մասը հիմնված է առաջին տպավորության վրա, որը փորձառու սահմանապահի համար, այնուամենայնիվ, ինտուիտիվ բնույթի է: Ցանկացած արտասովոր հանգամանք պետք է գրավի սպաների ուշադրությունը և հանգեցնի երկրորդ գծում այլ գործողությունների (այսինքն՝ երեխայի և չափահասի միջև հարաբերությունների ստուգում, հիմնավորող փաստաթղթերի մանրակրկիտ ստուգում և այլն):



Փորձառու սահմանապահները, ովքեր սովոր են երեխաներ տեսնել սահմանին, կարող են օգտվել իրենց այդ առավելություննից՝ նկատի ունենալով երեխայի ակնհայտ տարիքի և հասունության հետ կապված հետևյալ մի քանի հանգամանքները:

Երեխայի արտաքին տեսքը

- Ամաչկոտ, արտառոց, ինքնամփոփ կամ վախեցած:
- Փակ մարմնի վարքագիծ՝ որքան հնարավոր է փոքր երևալու հակում:
- Հայացքով հաղորդակցության բացակայություն, նայում է հատակին:
- Խմբի ֆազացած անդամներից առանձնացած տեսք ունի:
- Հագուստները. արդյո՞ք դրանք նոր են: Դրանց չափսերը համապատասխանում են երեխային, թե՞ ուրիշից վերցվածի տպավորություն են թողնում: Արդյո՞ք դրանք այնպիսին են, ինչպիսին ակնկալում էիք տեսնել: Արդյո՞ք հագուստը իրավիճակին համապատասխան է:
- Փորձում է հայացքով կապի մեջ մտնել որևէ անձնավորության հետ, որն անտեսում է նրան:
- Դիմագծերի նմանությունը չափահասի(ների)ն (եթե այդ չափահասը ծնողն է), պատշաճ կերպով հաշվի առնելով խտրականության մերժման սկզբունքը և պրոֆիլավորման ժամանակ դրա անաչառ կիրառմամբ:
- Երեխայի և ծնողի/ուղեկցող չափահասի փոխհարաբերությունների մանրակրկիտ ուսումնասիրում:
- Արդյո՞ք երեխան իրեն հարմարավետ է զգում չափահաս(ներ)ի հետ:
- Արդյո՞ք երեխան ազատ է խոսում:
- Արդյո՞ք երեխան չափահաս(ներ)ի նկատմամբ վախի որևէ նշան է դրսևորում:

Անհրաժեշտ է լրացուցիչ ուշադրություն դարձնել, եթե երեխային ուղեկցում է միայն մեկ չափահաս կամ երբ երեխան փախստականների մեծ ներհոսք ապահովող երկրից է, հակամարտության մեջ գտնվող երկրից է կամ այնպիսի երկրից է, որը հայտնի է մարդու իրավունքների լուրջ ոտնահարման դեպքերով:

3. Ողեկցվող և առանձին երեխաներ

Կա նվազ հավանականություն, որ քնած մանուկները ցավազրկող դեղամիջոցների ազդեցության ներքո լինեն՝ սահմանային ստուգուճա անցնելու համար: Եթե որոշ ժամանակ անց (զուցե երկրորդ գծի հսկողության ժամանակ) երեխան դեռ խորը քնած է, մասնավորապես՝ եթե ուղեկցող չափահասը նյարդայնության նշաններ է ցույց տալիս, ապա դա պետք է կասկած հարուցի:

Նույն մեթոդը կարելի է կիրառել նաև շատ փոքր երեխաների դեպքում, որոնք կարող են խոսել և վտանգ ներկայացնել ուղեկցող անձի համար: Նրանք կարող են չափազանց փոքր համարվել անհրաժեշտ հրահանգավորվելու համար, թե ի՞նչ պետք է ասել կամ չասել:

3.1.2. Առաջին գծի հսկողությունը

Խցիկների մոտ սահմանապահները պետք է ուշադրություն դարձնեն արտաքին տեսքի հետևյալ լրացուցիչ բնորոշ հատկանիշներին:

Նախադպրոցական երեխաներ (սովորաբար մինչև 6 տարեկան):

- Արդյո՞ք ձեր առջև տեղի ունեցող իրավիճակում որևէ արտասովոր բան եք նկատում:
- Արդյո՞ք երեխայի վարքագիծը համահունչ է ճանապարհորդության տևողությանը:
- Երեխան հանգի՞ստ է, վերացա՞ծ, շփոթվա՞ծ, վախեցած թե տխու՞ր:
- Արդյո՞ք երեխան հարմարավետ է զգում իրեն ուղեկցող անձի ներկայությամբ: Եթե անձնագրային ստուգման պաշտոնական գործողություններից վախեցած է և արդյո՞ք ուղեկցող անձնավորությանը մոտ է կանգնում:
- Արդյո՞ք երեխան նայում է մեկ այլ ուղևորի ուղղությամբ, որը փորձում է անտեսել նրան: (Այս դեպքում, այդ ուղևորը պետք է ավելի մանրակրկիտ ստուգում անցնի, քանի որ նա կարող է «ուղեկցորդ» լինել):

Դպրոցահասակ երեխաներ (սովորաբար 6 տարեկանից բարձր):

- Արդյո՞ք ձեր առջև տեղի ունեցող իրավիճակում որևէ արտասովոր բան եք նկատում:



- Արդյո՞ք երեխան վախեցած է կամ մտահոգ:
- Արդյո՞ք երեխան վերացած է/հեռավորություն է պահպանում/խոսում է ցածր, անըմբռնելի կամ կցկտուր:
- Արդյո՞ք երեխան չափից ավելի ենթարկվող է:
- Արդյո՞ք երեխան նայում է մեկ այլ ուղևորի ուղղությամբ, որը փորձում է անտեսել նրան: (Այս դեպքում, այդ ուղևորը պետք է ավելի մանրակրկիտ ստուգում անցնի, քանի որ նա կարող է «ուղեկցորդ» լինել):
- Արդյո՞ք երեխան ցավազրկող դեղամիջոցի ազդեցության տակ գտնվողի տեսք ունի:

Երեխային ուղեկցող չափահաս(ներ)ը

- Եթե ծնողն է՝ որքանո՞վ է նման երեխային: Արդյո՞ք նրա արտաքինը համեմատելի է երեխայի արտաքինի հետ: Արդյո՞ք նկատվում են նրանց վարքագծի, կեցվածքի կամ շարժունակի նմանություններ:
- Արդյո՞ք չափահասը մտահոգ, անհանգիստ կամ նյարդային տեսք ունի:
- Արդյո՞ք երեխայի և ուղեկցող չափահասի միջև շփումը համահունչ է նրանց մշակութային ամանձնահատկություններին:

Սահմանապահները երեխային պետք է տան նաև մի քանի ոչ պաշտոնական հարցեր, ինչպիսիք են նրա անունը, տարիքը կամ այլ անձնական մանրամասներ: Նման հարցերը, բնականաբար, վերացական են և պետք է համապատասխանեցված լինեն երեխայի տարիքի և հասունության աստիճանի հետ, բայց դրանք պետք է համեմատելի լինեն ճանապարհորդական փաստաթղթի տվյալների հետ:

Չափահասին տրվող հարցերը, որոնք կարող են բերել թրաֆիքինգի հատկանիշների բացահայտմանը, ներառում են հետևյալը.

- Դուք երեխայի ծնողը/խնամակալը/օրինական ներկայացուցի՞չն եք:
- Եթե ոչ՝ ապա որտե՞ղ են նրանք և ո՞վ եք դուք:
- Ե՞րբ է երեխան վերջին անգամ տեսել ծնողներին:
- Արդյո՞ք երեխան իր հետ ունի որևէ փաստաթուղթ, օրինակ՝ անձնագիր:
- Ո՞րն է երեխայի այցելության վայրը և նպատակը:
- Ո՞վ է այն կազմակերպել:

3. Ողեկցվող և առանձին երեխաներ

- Ո՞վ է վճարել ճամփորդության համար:
- Ունե՞ք արդյոք ձեր և երեխայի համատեղ նկարներ ձեզ հետ: (Սովորաբար, ծնողներն իրենց բջջային հեռախոսների կամ դրամապանակների մեջ ունենում են իրենց երեխաների նկարներից):

3.1.3. Փաստաթղթերի ստուգումը

Սահմանապահը պետք է ստուգի երեխայի և չափահաս փոխհարաբերությունները: Փաստաթղթերի ստուգման ժամանակ կարևոր է ընթացիկ զրույց ունենալ ուղևորների հետ՝ հետևելով նաև երեխայի վարքին (որոշ հուշուճեսեր նշված են վերևում) և, մասնավորապես՝ երեխայի արձագանքին (անձնագրային ստուգման կետում աշխատանքային տեղը պետք է նախագծված լինի այնպես, որ յուրաքանչյուր ներկա երեխան հստակ տեսանելի լինի, օրինակ՝ սովորական հայելու տեղադրումը կարող է օգնել ստուգելու՝ արդյո՞ք խցիկի հակառակ ստորին մասում երեխա կա):

Ի հավելումս ստուգման ստանդարտ միջոցառումների, անհրաժեշտ է կենտրոնանալ հետևյալի վրա.

- Երեխաների թիվը և փաստաթղթերի քանակը (անձնագրեր, անցագրեր և այլն): Նոր ճանապարհորդական փաստաթղթերը պետք է ավելի մանրակրկիտ ստուգվեն, հատկապես, եթե դրանք այնպիսի երկրներից են, որտեղ կարող էին տրված լինել խաբեբայության կամ կաշառքի միջոցով (համաձայն առկա ռիսկերի վերլուծության):
- Հիմնավորող փաստաթղթերը և ավիատոմսերը (երթուղային տոմսը)՝ ճանապարհորդության պատճառի վերաբերյալ կարճ հարցերով (առաջին հայտարարության և ներկայացված հիմնավորող փաստաթղթերի համատեղելիության ստուգում): Երեխաների հետ ճանապարհորդելիս, ուղեկցող բարեխիղճ չափահասները ձգտում են ընտրել հնարավոր ամենակարճ ճանապարհը:
- Երեխայի և նրա հետ ճանապարհորդող անձի իրավական հարաբերությունների ստուգում:
- Մեկից ավելի երեխաներ ունեցող ընտանեկան խմբեր. չափահաս(ներ) ի ծննդյան տարեթվերը և տարիք(ներ)ը պետք է ստուգվեն՝ հնարավոր անհամատեղելիությունների հայտնաբերման համար:



- Երեխաների քաղաքացիությունը. օրինակ՝ եթե երեխան ունի Եվրոպական Միության անձնագիր, ապա նա, ամենայն հավանականությամբ, պետք է կարողանա խոսել կամ գոնե հասկանալ եվրոպական որևէ լեզու(ներ):
- Շենգենյան տեղեկատվական ազգային համակարգի (NSIS) և ոստիկանության տվյալների բազաներին պարբերաբար հարցման կատարում, երբ Եվրոպական Միության քաղաքացի երեխաները չեն ճանապարհորդում երկու ծնողների հետ (երրորդ երկրների քաղաքացիների համար սա արդեն Սահմանների մասին Շենգենյան օրենսդրություն (SBC) պարտադիր պայման է):

Եթե առկա են երեխայի վտանգված լինելու հատկանիշներ ապա սահմանապահները պետք է անցկացնեն ստուգում՝ երկրորդ գծում:

3.2. Երկրորդ գծի հսկողությունը

Երկրորդ գծի ստուգումը պետք է իրականացնի մեկ այլ սպա (եթե հնարավոր է), որը տեղյակ է մաքսանենգների և մարդկանց առևտրով զբաղվողների գործողության ձևերին, ինչպես նաև վերջին ահազանգերին:

Բոլոր նախորդ գործողությունները պետք է վերանայվեն և անհրաժեշտության դեպքում՝ ստուգումները պետք է կրկնվեն: Որոշ լրացուցիչ ստուգումներ նկարագրված են ստորև:

Սահմանների մասին Շենգենյան օրենսդրություն (SBC) համաձայն՝ երեխան և նրան ուղեկցող անձը ստանում են նման ստուգման նպատակի (և դրա ընթացակարգի) մասին գրավոր ծանոթագրություն, որը պետք է իրագործվի որպես ստանդարտ և պատահականության սկզբունքով իրականացվող ընթացակարգ: Այս տեղեկատվությունը պետք է հասանելի լինի Եվրոպական Միության բոլոր պաշտոնական լեզուներով և համապատասխան անդամ երկրին սահմանակից բոլոր երկրների պետական լեզուներով: Այն պետք է մատուցվի հասկանալի լեզվով կամ հիֆնավոր կերպ համարվի որևէ այլ արդյունավետ եղանակով

3. Ողեկցվող և առանձին երեխաներ

ընթացում կամ հաղորդակցվելու միջոց՝ ներառյալ, անհրաժեշտության դեպքում, ներգրավելով թարգմանչի ծառայություններ:

Երկրորդ գծի հսկողության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երեխայի և ուղեկցող ուղևորի փոխհարաբերություններին:

3.2.1. Ճամփորդությունը

Ռիսկային համարվող ուղղություններով թռիչքների դեպքում (համաձայն վերլուծության արդյունքների), նախքան օդանավի վայրէջքը, պետք է օգտվել Ուղևորների նախնական ծանուցման համակարգից (APIS):

Բացի ճանապարհորդության տարբեր հատվածների տրամաբանական ստուգումից, որոշ դեպքերում կարող է օգտակար լինել նաև ուղևորացանկի և Ուղևորների անունների բազայի (PNR) ստուգումը, եթե գործող ազգային օրենսդրությունը թույլ է տալիս, ստուգելով՝ արդյո՞ք կան թռիչքի միևնույն ամրագրումով ճանապարհորդող այլ ուղևորներ, որը կարող է երեխային դնել ծանր հանցագործությունների վտանգի մեջ: Միջնորդը/ուղեկցորդը կարող է հայտնաբերվել նաև այլ ուղևորների թվում և խափանվել՝ նախքան նրա օդանավակայանի տարածքը լքելը: Եթե ազգային օրենսդրությունն ավիափոխադրողներին թույլ չի տալիս օգտվել PNR համակարգից, կարելի է օգտվել այնպիսի բաց աղբյուրներից, ինչպիսիք են <https://www.checkmytrip.com> կայքը:

Ավիաուղիների աշխատակիցները նույնպես կարող են հանդիսանալ օգտակար տեղեկատվության աղբյուր: Օդանավի անձնակազմը հաճախ օդում շատ ժամանակ է ունենում ուղևորներին դիտարկելու և որևէ տարօրինակ բան նկատելու համար (օրինակ՝ մի քանի շարքի տարբերությամբ նստած մեծահասակի և երեխայի փոխհարաբերությունները, խումբը, որտեղ երեխաներն ու ուղեկցող անձը միմյանց լավ չեն ճանաչում, նոր հագուստի մեջ տարօրինակ պահվածքի դրսևորումը, ինչից կարելի է ենթադրել, որ երեխաները ընտելացած չեն այդ հագուստին, հագուստին կարող են դեռ ամրացված լինել պիտակները և այլն):



3.2.2. Փաստաթղթերը և ուղեբեռը

խորհուրդ է տրվում մանրակրկիտ ստուգել ճանապարհորդական և ուղեկցության փաստաթղթերը՝ ճանապարհորդական փաստաթղթերը թողարկած երկրի հյուպատոսական մարմիններ դիմելու հնարավորությամբ: Հյուպատոսական մարմիններին պետք է դիմել այն դեպքում, երբ երեխան փախստականներ ուղարկող, հակամարտության մեջ գտնվող կամ մարդու իրավունքների լուրջ խախտումներ ունեցող երկրից է և/կամ երեխան ճանաչվում է որպես պոտենցիալ ապաստան հայցող, քանի որ կապ հաստատելու դեպքում երեխան և նրա ընտանիքը կարող են ավելի մեծ ռիսկի ենթարկվել: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել այն հանգամանքին, թե արդյոք վիզաներն ունեն հաջորդական սերիական համարներ, հատկապես երբ այդ համարները վերաբերվում են միասին չճանապարհորդող ուղևորներին:

Ազգային օրենսդրությանը համաձայն՝ պետք է դիմել I-24/7 (Ինտերպոլի տվյալների բազա) օգնությանը, եթե այն արդեն առաջին գծում ստուգման մաս չի հանդիսանում:

Եթե երեխաները չեն ճանապարհորդում իրենց սեփական ուղեբեռով, ապա մեծահասակն իր ուղեբեռի մեջ պետք է ունենա երեխային պատկանող որոշ հագուստ, խաղեր կամ խաղալիքներ: Հարցնելու պարագայում յուրաքանչյուր ուղեկցող մեծահասակ պետք է կարողանա թվարկել երեխային պատկանող մի քանի իր:

3.2.3. Ճփումը երեխայի հետ երկրորդ գծի ստուգման կետում

Երկրորդ գծում ստուգման ժամանակ երեխայի հետ խոսելիս սահմանապահիդ պետք է մեկ ակնթարթով երեխային առանձնացնի ուղեկցող մեծահասակից (շատ անսկատ): Եթե երեխան վտանգի մեջ լինի, ապա առավել հավանական է, որ նա բացատրի իրավիճակը պոտենցիալ շահագործող մեծահասակի բացակայության դեպքում: Երեխան պետք միշտ տեղեկացված լինի ընթացող գործընթացի վերաբերյալ:

3. Ողեկցվող և առանձին երեխաներ

Բացի դրանից, մեկ ուրիշ սահմանապահ տրամադրվող տեղեկությունների մեջ պետք է գտնի ցանկացած հակասություն կամ անճտություն՝ տալով մեծահասակին առանձին և ոչ պաշտոնական Նույն հարցերը, ինչ երեխային և ուղեկցող մեծահասակի պատասխանների համեմատում կատարի:

Խորհուրդ է տրվում մշտապես ունենալ երկու սահմանապահ, հնարավորության դեպքում՝ տղամարդ և կին ու փորձել ստեղծել հնարավորինս ոչ պաշտոնական և ընկերական միջավայր: Իրեն ապահով և համեմատաբար հանգիստ միջավայրում զգացող երեխան առավել հավանական է, որ ավելի շուտ հաղորդակցվի: Տարածայնությունները կարող են ռիսկի Նշան լինել, միևնույն շատ կարևոր է նվազագույնի հասցնել առճակատում ու ընդունել, որ իրավիճակն այնուամենայնիվ կարող է ընկալվել որպես պաշտոնական և լարված թե երեխաների, թե մեծահասակների համար (օրինակ՝ հնարավոր է, որ Նրանք անցյալում ուստիկանության կամ անվտանգության ծառայության աշխատակիցների հետ շփման բացասական փորձ են ունեցել):

Երկու սահմանապահների ներկայությունը Նաև հետագա ցանկացած ահաբեկման (կամ այլ անպատշաճ պահվածքի) մեղադրանքից պաշտպանվելու երաշխիք է: Երեխայի՝ ուղեկցող մեծահասակից առանձնացման ժամանակահատվածը պետք է խելամիտ չափով կարճ լինի, եթե իհարկե ռիսկի որևէ Նշաններ չեն Նկատվել:

Երեխաների հետ առանց հարցաքննության խոսելուց և միշտ հնարավոր է, սակայն պաշտոնական հարցաքննությունները Նրանց հետ պետք է անցկացվեն միայն խիստ անհրաժեշտության դեպքում և գործող օրենքին համապատասխան (տե՛ս Բաժին 3.3-ը): Երեխայի հետ ցանկացած երկխոսություն պետք է կայանա առանց անհարկի ձգձգումների, հատուկ դրա համար նախատեսված կամ հարմարեցված տարածքներում և ցանկալի է Նման առաջադրանքների համար պատրաստված մասնագետների հետ միասին: Հնարավորության դեպքում հարցաքննողը պետք է Նույն սեռի լինի, ինչ երեխան: Եթե երեխան չի հասկանում տվյալ լեզուն, ապա անհրաժեշտ է դիմել թարգմանիչների՝ իմաստալից երկխոսություն ապահովելու համար:



Հարցաքննությունների քանակը և դրանց տևողությունը պետք է նվազագույնի հասցվեն և երեխային, ըստ հնարավորության, պետք է հարցաքննի նույն անձը:

Առաջարկվում է, որ ցանկացած փոխազդեցության նպատակը բացատրվի և սահմանվեն հարցաքննության հիմնական կանոնները. «Հարցի պատասխանը չիմանալու դեպքում խորհուրդ չի տրվում գուշակել, քանի որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ, պետք է պարզապես ասել՝ չգիտեմ»: «Դուք գիտե՞ք ավելին այն մասին, թե ինչ է տեղի ունեցել»: «Եթե Դուք չեք ցանկանում պատասխանել հարցին, ապա նորմալ է այդպես էլ ասելը»: «Դուք կարող եք ուղղել ինձ կամ չիմա՞ծայնել»: «Եթե ես կրկնում եմ հարցը, ապա դա չի նշանակում, որ պատասխանը սխալ է եղել»: «Եթե հարցին պատասխանելը դժվար է, ապա մենք կարող եք վերադառնալ դրան ավելի ուշ»: «Ասեք ճշմարտությունը»:

Ընդհանուր առմամբ, երեխաները կարող են ուղեկցվել նրանց հարցաքննության ժամանակ՝ համապատասխան հանգամանքների ամկայության դեպքում՝ իրենց իսկ ընտրած մեծահասակի կողմից, սակայն այդ նպատակով նրանց պահանջը պետք է մերժվի, եթե, օրինակ, կասկած կա, որ մեծահասակը հարցերի տրման ժամանակ ուղղորդողի դեր կունենա: Երեխայի ներգրավվածությամբ հանցագործություն կասկածելու դեպքում սահմանապահներն ի սկզբանե պետք է ապահովեն, որ զոհ կամ վկա հանդիսացող երեխայի հարցաքննությունը իրականացվի գործող ազգային օրենսդրության համաձայն և հնարավոր լինի կիրառել որպես ապացույց (կարող է պահանջվել դատախազի կամ դատավորի նախնական թույլտվություն, հարցազրույցն անցկացնել իրավախորհրդատուի և/կամ երեխաների պաշտպանության մարմինների ներկայությամբ, և այլն): Հակառակ դեպքում սահմանապահները կարող են միայն ոչ պաշտոնական զրույց ունենալ երեխայի հետ:

Ստորև ներկայացվում են երեխաների հետ շփվելու որոշակի խորհուրդներ՝ հաշվի առնելով նրանց ներկայիս տարիքն ու հասունությունը.

- ♦ ուշադիր/զոն եղեք անհանգստության նշանների դեպքում, օրինակ՝ դեմքի արտահայտություններ, շարժումներ կամ մարմնի լեզուն;

3. Ողեկցվող և առանձին երեխաներ

- մի ակնկալեք կամ ստիպեք տեղեկության անհապաղ բացահայտում;
- խոսեք երեխայի հետ բարեկամաբար և ընկերական միջավայրում, եղեք բաց, հստակ և ազնիվ. հնարավորության դեպքում կիրառեք երեխայի մայրենի լեզուն (մայրենի լեզվի կրողի աջակցությամբ)
- խոսեք երեխայի տարիքին և հասունությանը համապատասխան լեզվով, արտահայտվեք պարզ և հստակ տերմիններով;
- բացատրեք երեխային, թե ինչ է կատարվում և ինչու են ստուգվում նրա հանգամանքների մանրամասնությունները:
- երեխային իր կարգավիճակի, իրավունքների և պաշտպանության միջոցների վերաբերյալ տեղեկություններ տրամադրեք
- հավաստիացրեք երեխային, որ ձեր նպատակը նրա բարեկեցությունը, անվտանգությունն ու պաշտպանությունն են;
- տվեք բաց և կոնկրետ հարցեր (ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս, ո՞վ, ինչո՞ւ);
- երեխային ջուր խմելու, զուգարան գնալու կամ ուղղակի հոգևելու դեպքում ընդմիջում տվեք և պատշաճ արձագանքեք հատուկ կարիքներին կամ խնդրանքներին;
- խուսափեք երեխայի մտածածի վերաբերյալ ենթադրություններ անելուց;
- ստուգեք, թե արդյոք երեխան հասկացել է. խնդրեք նրան ասել, թե նա ինչ է հասկացել
- հարցրեք երեխային, արդյոք նա ունի հարցեր և պատասխանեք դրանց:

Պարզելու համար, թե արդյոք երեխան իսկապես ծանոթ է այն երկրի միջավայրին, որտեղից ըստ մեծահասակի խոսքերի, նրանք ծագում են, կարելի է դիտարկել հետևյալ հնարավոր թեմաները:

- հեռուստատեսային հաղորդումներ, մուլտֆիլմեր և երաժիշտներ, որոնք պահանջված են ծագումով այդ երկրից երիտասարդների շրջանակում (այս տեղեկությունները կարող եք գտնել համացանցում),
- իրենց բնակության տարածքի տարրական իմացություն (Google Earth Street View հավելվածը կարող է օգտակար գործիք լինել այս պարագայում),
- Իրենց դպրոցի, այն սպորտի, որով զբաղվում են և տան ներքին հարդարանքի մանրամասները:



Ցանկացած ժամանակ երեխայի պատասխանները կարող են խաչաձև ստուգվել ուղեկցող մեծահասակի կամ նույն խմբի այլ երեխաների պատասխանների միջոցով:

3.3. Տարանցիկ գոտիներ և մուտքի/ելքի ստուգումներ

Այս գլխի այլ հատվածներում կատարված դիտողությունների մեծ մասը կիրառելի է նաև տարանցիկ գոտու և մուտքի/ելքի դարպասների մոտ հսկողության համար՝ հաշվի առնելով, որ այդ դեպքերում քողարկված թիմը (օր.՝ քաղաքացիական հագուստով սահմանապահները) կարող է ավելի լավ ուսուցնասիրել ուղևորի վարքագիծը:

Ծանրաբեռնված տարանցիկ գոտիներում փաստաթղթերը, նստեցման կտրոններն ու տոմսերը կարող են հեշտությամբ փոխանակվել կամ փոխվել: Այն երեխաները, որոնք ուղեկցվում էին ժամանելիս, այստեղ կարող են շատ արագ լքվել/բաց թողնվել: Գերբեռնված օդանավայաններում, տեսանկարահանման համակարգի տրամադրած նկարահանումների գնումն ու հսկողությունը կարող են անգնահատելի լինել այս գործելակերպի հայտնաբերման հարցում:

3.4. Վերջնական որոշումներ և ուղղություններ

Բոլոր որոշումներում երեխայի շահերը պետք է առաջնային նշանակություն ունենան և պետք է պահպանվի *հարկադիր վերադարձի* անթույլատրելիության սկզբունքը:

Երեխան պետք է կալանավորվի միայն բացառիկ դեպքերում, գործող ազգային օրենսդրությանը միշտ համապատասխան, հնարավոր ամենակարճ ժամանակահատվածով և կիրառվի որպես ծայրահեղ միջոց: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը սահմանել է, որ երեխաների կալանավորումը չի կարող արդարացվել միգրացիոն

3. Ողեկցվող և առանձին երեխաներ

կարգավիճակի պատճառներով¹²: Ցանկացած ժամանակ և կախված հանգամանքներից, եթե կա պատճառաբանված կասկած, որ երեխան կարող է վտանգի մեջ լինել, ռիսկի ենթարկվել, փոխադրված լինել թրաֆիքինգի նպատակով կամ այլ կերպ պաշտպանության կարիք ունենալ վերը նշված նշանների հիման վրա, ապա մինչ որևէ վերջնական որոշման կայացնելը, անմիջապես պետք է գործարկվեն ուղղորդման ու նախնական հետաքննություն մեխանիզմները՝ համաձայն գործող ազգային օրենսդրության: Ուղղորդում կամ նախնական տեղաբաշխում նշանակելու դեպքում օդանավակայանում պետք է երեխաների պաշտպանության մասնագիտացված անձնակազմի ներգրավման հայտ ուղարկել. նրանց կոնտակտային տվյալները սահմանապահները պետք է ձեռքի տակ ունենան:

Սահմաններում ընդհանուր ընդունված կանոն է հանդիսանում այն, որ երեխաները չպետք է առանձնացվեն իրենց ծնողից (կամ ուղեկցող ազգականից), բացառությամբ այն դեպքի, երբ չկա պատճառաբանված կասկած, որ երեխան նրանց հետ ռիսկի մեջ է գետնում: Երեխաների պաշտպանության գործակալությունները առավել լիարժեք կկարողանան հաստատել այս իրադրությունը և կզբաղվեն այդ հարցով:

Անհրաժեշտ է ապահովել, որ երեխայի պաշտպանության միջոցառման և/կամ NRM-ի մեկնարկի և գործի փաստացի հանձնման պահի միջև ընկած ժամանակահատվածը լինի հնարավոր նվազագույնը:

- Փորձեք համոզվել, որ երեխայի պաշտպանության գործարկման և/կամ Ազգային ուղղորդման մեխանիզմի (NRM) և փաստացի հանձնման միջև ժամանակահատվածը հնարավոր նվազագույնն է: Այդ նպատակով համոզվեք, որ պաշտպանության կամ Ազգային ուղղորդման մեխանիզմի մեկնարկի տվյալները (օրինակ՝ կոնտակտային անձ(իք) և համարները) հաստատված և հստակ հայտնի են:
- Հնարավորության դեպքում պաշտպանության և/կամ NRM-ի հարցերով կազմակերպեք կոորդինացման հանդիպում՝ քննարկելու

¹² ՄԱԿԵԻՀ, Ընդհանուր մեկնաբանություն No 6 (2005 թ.) իրենց ծագման երկրից դուրս չուղեկցվող կամ առանձին երեխաների հետ վարվելու վերաբերյալ, կետ 61:




համար, թե ինչպես վարվել այն իրավիճակներում, երբ երեխաները ժամանում են ուշ երեկոյան, վաղ առավոտյան, տոն կամ ոչ աշխատանքային օրերին:

- ♦ Համոզվեք, որ հիժնական ծառայությունները (սնունդը, պետքարանի հասանելիությունը, բժշկական օգնությունը և այլն) հասանելի են երեխաներին և եթե հնարավոր է, ապա սպասելու ժամանակահատվածում նրանք ունենան որևէ բանով զբաղվելու հնարավորություն:
- ♦ Տեղյակ պահեք երեխաներին, թե ինչ է կատարվում և ինչ է ապաստվում:

Սահմանապահները պետք է իրազեկ լինեն ուղեկցվող և առանձին երեխաների համար օդային փոխադրողի գործընթացներին:

4. Առանց ուղեկցության երեխաներ



4.1. Առաջին գծի անցման և հետագա հսկողությունը

4.1.1. Իրավիճակը մինչև հսկողության գոտի. կա՞ արդյոք որևէ կասկածահարույց երևույթ:

Առանց ուղեկցության երեխաների վարքագծի դիտարկման ժամանակ կարելի է հաշվի առնել **ուղեկցվող և առանձին երեխաների վարքագծային մոդելների ժամանակ կիրառվող պարամետրերին նման պարամետրեր**: Մարդկանց վարքագծի դիտարկումը կարող է օգտակար լինել այն ժամանակ, երբ նրանք տեղյակ չեն, որ իրենց հետևում են: Ավելի մեծ օղակավակայաններում միշտ արժե դիտարկել քաղաքացիական հագուստով ոստիկանների տեղակայումը:

Սահմանապահները չպետք է ենթադրություններ անեն կամ դրսևորեն կանխակալ վերաբերմունք՝ մարդկանց դիտելիս: Երեխաներին դիտարկելիս շատ կարևոր է խտրականություն թույլ չտալ մշակութային, կրոնական, էթնիկական, գենդերային, ազգային պատկանելիության կամ այլ գործոններով:

Ցանկացած գնահատման կարևոր մասը հիմնված է առաջին տպավորության վրա, որը փորձառու սահմանապահի համար, այնուամենայնիվ, ինտուիտիվ բնույթի է: Ցանկացած արտասովոր հանգամանք պետք է գրավի սպաների ուշադրությունը և հանգեցնի երկրորդ գծում այլ գործողությունների (օրինակ՝ ճանապարհորդական և ուղեկցող փաստաթղթերի մանրակրկիտ ստուգում, առանձին դիտարկում, երեխային սպասող անձի փոխհարաբերության և դիմադրության ուսուսմասիրում և այլն):

Փորձառու սահմանապահները, որոնք սովոր են տեսնել սահմանը հատող երեխաների, կարող են օգտվել իրենց գիտելիքներից՝ հաշվի առնելով երեխայի տարիքի և հասունության հետ կապված հետևյալ կետերը:



4.1.2. Առաջին գծի հսկողությունը

Խցիկների մոտ սահմանապահները պետք է ուշադրություն դարձնեն արտաքին տեսքի հետ կապված հետևյալ լրացուցիչ բնորոշ հատկանիշներին.

- ♦ Արդյո՞ք ձեր առջև տեղի ունեցող իրավիճակում որևէ արտասովոր բան եք նկատում:
- ♦ Երեխայի վարքագիծն արդյո՞ք համապատասխանում է թռիչքի տևողությանը, որից նա հենց նոր է դուրս եկել:
- ♦ Երեխան հանգի՞ստ է, վերացա՞ծ, շփոթվա՞ծ, վախեցած թե տխու՞ր:
- ♦ Արդյո՞ք երեխան նայում է այլ ուղևորի ուղղությամբ: (Այս դեպքում, այդ ուղևորը պետք է ավելի մանրակրկիտ ստուգում անցնի, քանի որ նա կարող է «ուղեկցորդ» լինել):

4.1.3. Փաստաթղթերի ստուգումը

Լեզվական պատնեշն անկասկած ինդիկ է, սակայն երեխայի հետ կարելի է բարեկամաբար մի քանի բառ փոխանակել՝ հաշվի առնելով երեխայի տարիքն ու հասունությունը: Հնարավոր հարցերն առնչվում են նրան, թե ով է դիմավորում նրան անվտանգության գոտուց դուրս՝ ժամանման գոտում. եթե երեխան հաճախ է ճանապարհորդում, ապա որտեղ են նրա ծնողները և ով է երեխային օդանավակայան բերել՝ նրա ծագման երկրում:

Բացի ստանդարտ ստուգումներից՝ անհրաժեշտ է կենտրոնանալ հետևյալի վրա.

- ♦ Ներկայացված փաստաթղթերը (անձնագրեր, վիզաներ, ուղեկցող փաստաթղթեր և այլն): Նոր ճանապարհորդական փաստաթղթերը պետք է ավելի մանրակրկիտ ստուգվեն, հատկապես, եթե դրանք այնպիսի երկրներից են, որտեղ դրանք կարող էին տրված լինել խաբեբայության կամ կաշառքի միջոցով (համաձայն առկա ռիսկերի վերլուծության):
- ♦ Որոշ հյուպատոսություններ թողարկում են երեխաների վիզաներ, որտեղ մեկնաբանություններ դաշտում նշվում է երեխային ուղեկցող անձի անունը (օրինակ՝ բրիտանական հյուպատոսությունները).

4. Առանց ուղեկցության երեխաներ

Երեխան կարող է ունենալ իր անձնագրում որոշ հին վիզաներ՝ ժամանումների գոտուց դուրս իրեն սպասող անձի անունով:

- ♦ Ուղեկցող փաստաթղթերի և թռիչքի տոմսերի (երթուղային տոմսի) ուսուճաասիրում՝ ճանապարհորդելու նպատակի վերաբերյալ կարճ հարցեր ուղղելով:
- ♦ Համաձայն Սահմանների մասին Շենգենյան օրենսդրության (Schengen Borders Code (SBC)), դիմել Շենգենյան ազգային տեղեկատվական համակարգի և ոստիկանության տվյալների բազաների օգնությանը (երրորդ երկրների քաղաքացիների համար դա արդեն SBC պահանջն է) և օգտվել երեխաների առևանգման ահազանգման համակարգից, եթե առկա է տեղական նման համակարգ:

Խիստ ցանկալի է դիմել երկրորդ գծի սպային՝ երեխային սպասող անձի ինքնությունը հաստատելու և հակիրճ հարցաքննություն անցկացնելու խնդրանքով (տե՛ս Բաժին 5.2.1):

Եթե առկա են երեխայի վտանգված լինելու հատկանիշներ՝ սահմանապահները պետք է իրականացնեն երկրորդ գծի ստուգումներ:

4.2. Երկրորդ գծի հսկողությունը

Երկրորդ գծի ստուգումը պետք է իրականացնի մեկ այլ սպա (եթե հնարավոր է), որը տեղյակ է մաքսանենգների և մարդկանց առևտրով զբաղվողների գործողության ձևերին, ինչպես նաև վերջին ահազանգերին:

Բոլոր նախորդ գործողությունները պետք է վերանայվեն և անհրաժեշտության դեպքում՝ ստուգումները պետք է կրկնվեն:

Փաստաթղթերի և տոմսերի ստուգումները՝ ճամփորդության տարբեր հատվածների մանրամասն ուսուճասիրությամբ, տարանցիկ գոտիների վերաբերյալ զգուշացումները և երեխաների հետ շփման առավել նպատակահարմար մեթոդներն, ըստ Էուլթյան, Նուլեն են ինչպես ուղեկցվող, այնպես էլ առանց ուղեկցության ճամփորդող երեխաների համար:



Սահմանների մասին Շենգենյան օրենսդրություն (SBC) համաձայն՝ երեխան և նրան ուղեկցող անձը ստանում են նման ստուգման նպատակի (և դրա ընթացակարգի) մասին գրավոր ծանոթագրություն, որը պետք է իրագործվի որպես ստանդարտ և պատահականության սկզբունքով իրականացվող ընթացակարգ: Այս տեղեկատվությունը պետք է հասանելի լինի Եվրոպական Միության բոլոր պաշտոնական լեզուներով և համապատասխան անդամ երկրին սահմանակից բոլոր երկրների պետական լեզուներով: Այն պետք է մատուցվի հասկանալի լեզվով կամ հիմնավոր կերպ համարվի որևէ այլ արդյունավետ եղանակով ընթանելու կամ հաղորդակցվելու միջոց՝ ներառյալ, անհրաժեշտության դեպքում, ներգրավելով թարգմանչի ծառայություններ:

4.2.1. Երեխային դիմավորող անձը

Շատ կարևոր է, հնարավորության դեպքում, ապահովել երեխային ուղեկցող կամ դիմավորող անձի ներկայությունը: Երկրորդ գծի հսկողության սպայի առաջնահերթ պարտավորությունն է, որպես կանոն, տվյալ անձի ինքնության հաստատուճն ու հակիրճ հարցաքննությունը, սակայն այդպիսի ստուգումը պետք է իրականացվի միայն առկա փաստաթղթերի, ավիաընկերության աշխատակիցների և երեխայի միջոցով իրավիճակը գնահատելուց հետո: Անհրաժեշտ է հետազայում ստուգել երեխային ուղեկցող կամ դիմավորող անձի ներկայացրած տվյալները:

Ցանկալի է, որպեսզի քաղաքացիական հագուստով մի քանի սպա հետևեն երեխային՝ նրան դեպի սպասարահ ուղեկցող անձնակազմից մի քանի մետր հեռավորությունից, համոզվելու համար, որ երեխային դիմավորող անձը սպասում է նրան: Թրաֆիքինգ կատարող անձը կարող է թաքնվել՝ երեխային սահմանապահի համազգեստով սպայի ուղեկցությամբ տեսնելով:

Ժամանման սրահից դուրս երեխային սպասող անձը պետք է տեղեկացվի պատահական ընտրության հիմունքներով մանրակրկիտ ստուգման ստանդարտ ընթացակարգի անհրաժեշտության մասին՝ ուշադրություն դարձնելով երեխային սպասող անձի արձագանքին:

Իր սեփական ուղեբեռով ճամփորդող երեխայի դեպքում, նրան ուղեկցող կամ դիմավորող անձը պետք է քիչ թե շատ տեղյակ լինի ուղեբեռի պարունակությանը, հատկապես, շատ ցածր տարիքի երեխայի դեպքում: Հարց ուղղելիս՝ յուրաքանչյուր ուղեկցող մեծահասակ պետք է կարողանա թվարկել երեխային պատկանող մի քանի իր:

Ստուգող սպան պետք է լիովին համոզված լինի, որ երեխայի ճամփորդության նպատակը իրավաչափ է և դրա վերաբերյալ բացատրությունը ճիշտ է:

Ինքնության հաստատման և հսկողության գործընթացի ժամանակ, երեխայի կամ վերջինիս անունից իրեն դիմավորող անձի կողմից ներկայացված ապաստան ստանալու հայցա-դիմումը չպետք է կանխի կամ շեղի սահմանապահի կողմից իրականացվող անհրաժեշտ բոլոր փաստերի հավաքագրման գործընթացը և սահմանված կանոնավոր ընթացակարգը:

4.3. Վերջնական որոշումներ և ուղղորդում

Բոլոր որոշումներում երեխայի շահերը պետք է գերակա առաջնահերթություն ունենան և պետք է պահպանվի *հարկադիր վերադարձի* անթույլատրելիության սկզբունքը:

Երեխային կարելի է անազատության մեջ պահել միայն շատ բացառիկ դեպքերում՝ կիրառվող ազգային օրենքների շրջանակներում, հնարավոր ամենակարճ ժամկետով և որպես ծայրահեղ միջոց: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն, երեխաներին անազատության մեջ պահելը չի կարող արդարացված լինել ներգաղթյալի կարգավիճակի հիման վրա¹³: Ցանկացած ժամանակ և կախված հանգամանքներից, եթե կա պատճառաբանված կասկած, որ երեխան

13 ՄԱԿԻԸ, Ընդհանուր Մեկնաբանություն No 6 (2005 թ.) իրենց ծագման երկրից դուրս չուղեկցվող կամ առանձնացված երեխաների հետ վարվելու վերաբերյալ, կետ 61:



կարող է վտանգի մեջ լինել, ռիսկի ենթարկվել, փոխադրված լինել թրաֆիքինգի նպատակով կամ այլ կերպ ասած պաշտպանության կարիք ունենալ վերը նշված հանցանշանների հիման վրա, ապա մինչ որևէ վերջնական որոշման կայացումը, անմիջապես պետք է գործարկվեն ուղղորդման ու նախնական հետաքննության մեխանիզմները՝ համաձայն գործող ազգային օրենսդրության: Ուղղորդում կամ նախնական տեղաբաշխում նշանակելու դեպքում օդանավակայանում պետք է երեխաների պաշտպանության մասնագիտացված անձնակազմի ներգրավման հայտ ուղարկել. նրանց կոնտակտային տվյալները սահմանապահները պետք է ձեռքի տակ ունենան:

Սահմաններում ընդհանուր ընդունված կանոն է հանդիսանում այն, որ երեխաները չպետք է առանձնացվեն իրենց ծնողից (կամ ուղեկցող ազգականից), բացառությամբ այն դեպքի, երբ չկա պատճառաբանված կասկած, որ երեխան նրանց հետ ռիսկի մեջ է գնտվում: Երեխաների պաշտպանության գործակալությունները առավել լիարժեք կկարողանան հաստատել այս իրադրությունը և կզբաղվեն այդ հարցով:

Անհրաժեշտ է ապահովել, որ երեխայի պաշտպանության միջոցառման և/կամ NRM-ի մեկնարկի և գործի փաստացի հանձնման պահի միջև ընկած ժամանակահատվածը լինի հնարավոր նվազագույնը:

- Փորձեք համոզվել, որ երեխայի պաշտպանության գործարկման և/կամ Ազգային ուղղորդման մեխանիզմի (NRM) և փաստացի հանձնման միջև ժամանակահատվածը հնարավոր նվազագույնն է: Այդ նպատակով համոզվեք, որ պաշտպանության կամ Ազգային ուղղորդման մեխանիզմի մեկնարկի տվյալները (օրինակ՝ կոնտակտային անձ(իք) և համարները) հաստատված և հստակ հայտնի են:
- Հնարավորության դեպքում պաշտպանության և/կամ NRM-ի հարցերով կազմակերպեք կոորդինացման հանդիպում՝ քննարկելու համար, թե ինչպես վարվել այն իրավիճակներում, երբ երեխաները ժամանում են ուշ երեկոյան, վաղ առավոտյան, տոն կամ ոչ աշխատանքային օրերին:
- Համոզվեք, որ հիժնական ծառայությունները (սնունդը, պետքարանի հասանելիությունը, բժշկական օգնությունը և այլն)

4. Առանց ուղեկցության երեխաներ

հասանելի են երեխաներին և եթե հնարավոր է, ապա սպասելու ժամանակահատվածում նրանք ունենան որևէ բանով զբաղվելու հնարավորություն:

- ♦ Տեղյակ պահեք երեխաներին, թե ինչ է կատարվում և ինչ է ապաստում:

Սահմանապահները պետք է իրազեկ լինեն ուղեկցվող և առանձին երեխաների համար օդային փոխադրողի գործընթացներին:



ՎԵԳՎ Ձեռնարկ. Երեխաներն օդանավակայանում

5. Լրացուցիչ տեղեկություններ



5.1. Տվյալների հավաքագրում

Պատշաճ հավաքագրված տվյալները ցույց են տալիս, որ տեղամասային աշխատանքներն անց են կացվել պատշաճ կարգով: Հաշվի առնելով, որ Եվրոպական Միության մակարդակով քիչ տվյալներ են հասանելի արտաքին սահմանները հատող երեխաների մասին, տվյալների հավաքագրման աշխատանքների պատշաճ կազմակերպումը թույլ կտա ստեղծել բարելավված գործելակերպ և փրկել շատ տուժողների կյանքը:

Սահմանապահները կարող են կարևոր դեր խաղալ երեխաներին հանցագործությունների մեջ ներգրավելու փորձերի բացահայտման գործում: Հարակից հետաքննությունների հաջողությունը հաճախ կախված է այն սահմանապահների արձագանքից և գործողություններից, որոնք առաջինն են նկատել ինչ-որ սխալ կամ որևէ բանի բացակայությունը: Անհրաժեշտ է ապահովել դեպքին առնչվող ցանկացած տեղեկության արագ փոխանցումը համապատասխան մարմիններին՝ անհապաղ պատասխան գործողություն ձեռնարկելու համար: Թրաֆիքինգ իրականացնող անձիք հազվադեպ են միայնակ գործում և հաճախ փոխում են մուտքի կետը՝ բացահայտվելու վտանգը նվազեցնելու նպատակով: Իետևաբար, միայն տվյալների հավաքագրման ծավալուն աշխատանքների միջոցով կարելի է բացահայտել նման գործելաոճը և կիսվել լավագույն փորձով: Երեխաների հավաքագրումը, տեղափոխումը և շահագործումը պահանջում է բարձր կարգի խմբային կազմակերպվածություն: Սահմանապահները, Իետևաբար, ականատես են լինում մի շարք փոխկապակցված հանցագործությունների¹⁴:

5.2. Տվյալների պաշտպանություն

Սահմանապահները պետք է լիարժեք Իետևեն տվյալների պաշտպանության բոլոր կիրառելի պահանջներին՝ երեխաներին առնչվող

14 Թրաֆիքինգի Իետև փոխկապակցված հանցագործությունների վերաբերյալ Իետևերպոլի ամենամյա զեկույց, 2008 թ.:



տվյալները արձանագրելիս, մշակելիս և փոխանցելիս: Անհրաժեշտ է հետևել տվյալների պաշտպանության կանոնների պահանջներին:

Միևնույն ժամանակ, սահմանապահները պետք է լավագույն ջանքերը գործադրեն՝ երեխաներին առնչվող տվյալներն արձանագրելիս, մշակելիս և փոխանցելիս: Անհրաժեշտ է կիրառել և հետևել տվյալների պաշտպանության կանոնների պահանջները: Որպես ընդհանուր կանոն, սահմանապահների կողմից երեխային վերաբերող որևէ կոնկրետ տեղեկություն չպետք է փոխանցվի նրա ծագման երկրին կամ ընդունող երկրում գտնվող ծագման երկրի որևէ իրավասու մարմնի (օրինակ, հյուպատոսական ներկայացուցչություններին):

Անհրաժեշտության դեպքում, պահանջվում է բացահայտել երեխային դիմավորող անձանց և ժամանման տարածքից դուրս սպասող չափահաս(ներ)ին (տե՛ս Գլուխ 5, Բաժին 5.2.1):

5.3. Երրորդ երկրների հյուպատոսությունների ներկայացուցիչներ

Օժանդակ և ճամփորդական փաստաթղթերը արագ ստուգելու համար պետք է արժևորել այդ պատվիրակությունների հետ կապը, համոզված լինելով, որ դա երեխայի համար հետագա վտանգ չի ստեղծում (օրինակ, եթե երեխան հայտնում է ապաստան հայցելու իր մտադրության մասին):

Կարելի է նաև երեխային ուղեկցող ուղևորներին (չափահասներին) կամ նրան դիմավորող անձանց թույլ տալ իրենց մայրենի լեզվով խոսող որևէ անձի կամ թարգմանչի օգնությամբ բացատրել իրենց կարգավիճակը համապատասխան մարմիններին:

5.4. Ավիափոխադրողի՝ առանց ուղեկցողի ճամփորդող երեխաներին առնչվող ընթացակարգերը

Տարիքային պահանջները, որոնք, ընդհանուր առմամբ, օգտագործվում են ավիափոխադրողների կողմից առանց ուղեկցողի ճամփորդող անչափահաս երեխաներին նկարագրելու համար, վերաբերում են 5-ից 11 (երբեմն, մինչև 15) տարեկան երեխաներին: Ավիափոխադրողների կողմից ընդունված ընթացակարգերի մասին տեղեկությունները, որպես կանոն, հասանելի են նրենց պաշտոնական կայքերում:

Տեղական իրավապահ սպաները պետք է վերլուծեն տարբեր ընթացակարգերը և բացահայտեն դրանց հնարավոր թույլ կողմերն՝ իրենց օդանավակայաններից օգտվող երեխաների համար:



ՎԵԳԱ Ձեռնարկ. Երեխաներն օդանավակայանում

6. Պաշտպանության և ուղղորդման ազգային մեխանիզմներ



Ինչպես նշված է 2.9 Բաժնում, ազգային ուղղորդման մեխանիզմը ազգային մակարդակում ստեղծված մի համակարգ է, որը նախատեսված է համակարգված պատասխան գործողությունների միջոցով խոցելի անձանց և Նրանց իրավունքները պաշտպանելու համար: NRM-ի կազմակերպման գործընթացը տարբերվում է ըստ ազգային առանձնահատկությունների և լուծում պահանջող խնդիրների:

Օրինակ, անդամ պետությունները եվրոպական իրավունքի համաձայն պարտավոր են ազգային մակարդակում ստեղծել ուղղորդման մեխանիզմներ՝ թրաֆիքինգից տուժած մարդկանց համար¹⁵: Որոշ երկրներում, խոցելի երեխաների մասնակցությամբ դեպքերի համար սահմանապահներից պահանջվող պատասխան գործողությունները ներկայացվում են որպես մի շարք ստանդարտ գործառնական ընթացակարգեր, որոնք կարելի է հեշտությամբ կիրառել: Սակայն կան երկրներ, որտեղ պահանջվող պատասխան գործողություններն այնքան էլ հստակ ձևակերպված չեն և սահմանապահ սպաները կարող են կիրառել հատուկ ուղղորդման մեխանիզմներ՝ սեփական հայեցողությամբ:

Եվրոպական միությունը նաև նպաստել է երեխաների առևանգման դեպքերին անչվող ազգային ուղղորդման մեխանիզմների հաստատմանը: Հանձնաժողովը թողարկել է ուղեցույցեր և¹⁶ առաջարկել է իր աջակցությունը¹⁷ անդամ պետություններին՝ երեխաների առևանգման

15 Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2011/36/ԵՄ հրահանգի 11(4) հոդվածը սահմանում է, որ «Անդամ պետությունները, համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ համատեղ, պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ տուժածների վաղ բացահայտմանը, օգնության և աջակցության տրամադրման ուղղված համապատասխան մեխանիզմներ սահմանելու համար:

16 «Երեխաների առևանգման դեպքերում միջսահմանային ահազանգման լավագույն փորձը», SEC(2008 թ.) 2912 վերջնական տարբերակ.
http://ec.europa.eu/justice/funding/rights/call_10014/ramc_ag_annex_5_2008_en.pdf

17 Օրինակ, Բուլղարիան, Կիպրոսը, Լեհաստանը, Սլովակիան, Իսպանիան և Միացյալ Թագավորությունը օգտվել են այդ հնարավորությունից:



դեպքերի միջսահմանային փոխգործակցության հնարավորությամբ ահազանգման համակարգերի հաստատման համար: Բացի այդ, Եվրոպական խորհուրդը¹⁸ առաջարկել է անդամ պետություններին հաստատել այդպիսի մեխանիզմներ և կնքել անհրաժեշտ համագործակցության համաձայնագրեր: Հարկ է նշել, որ ազգային համակարգերի բազմազանությունը խոչընդոտում է Եվրոպական միության մակարդակով դրանց միասնականության ապահովմանը: Մինչ օրս, ոչ բոլոր անդամ պետություններն են մշակել այդպիսի մեխանիզմներ: Այնուամենայնիվ, այդ մեխանիզմներն անհրաժեշտ են երեխաների առևանգման դեպքերում արագ և համակարգված պատասխան գործողությունների ապահովման համար՝ բոլոր համապատասխան դերակատարների, այդ թվում, սահմանապահների ներգրավմամբ:

NRM-ի հաստատման և միջսահմանային ու միջուրոտային համագործակցության ապահովման հիմնական դերակատարները ազգային իրավասու մարմիններն են: Այնուամենայնիվ, այս առումով, սահմանապահները նույնպես կարող են կարևոր դեր խաղալ՝ խրախուսելով համապատասխան ազգային իշխանություններին ստեղծել այդպիսի մեխանիզմներ՝ այն երկրներում, որտեղ դրանք դեռևս գոյություն չունեն:

Ֆրոնտեքսը խորհուրդ է տալիս ստեղծել ուղղորդման արագ համակարգ: Երեխաներին առնչվող ցանկացած ուղղորդման մեխանիզմի համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

- Բոլոր ձեռնարկվող միջոցառումների ժամանակ առաջնահերթությունը պետք է տրվի երեխայի իրավունքների պաշտպանությունը՝ լիարժեք հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը:
- Գործող համակարգի արդյունավետության ապահովման համար այն պետք է լինի հնարավորինս ընդգրկուն՝ չարաշահման, շահագործման և մարդկային թրաֆիքինգի տարբեր ձևերին արագ արձագանքելու համար: Անհատ անձանց հատուկ կարիքները պատշաճ կերպով

¹⁸ Խորհրդի եզրակացությունները՝ 11 նոյեմբեր 2008թ.. <http://register.consilium.europa.eu/doc/srv?l=EN&f=ST%2014612%202008%20REV%202>

6. Պաշտպանության և ուղղորդման ազգային մեխանիզմներ

հասցեագրելու համար անհրաժեշտ է ապահովել մասնագիտացված ծառայությունների լայն շրջանակ:

- Անհրաժեշտ է կիրառել բազմաոլորտային և միջոլորտային մոտեցում: Առավել արդյունավետ են երեխաների պաշտպանության ինտեգրված համակարգերը: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել պետական հատվածի և քաղաքացիական հասարակության բոլոր համապատասխան և մասնագիտացված անձանց ներգրավվածությունը:
- Տարբեր կողմերի միջև կնքված համաձայնագրերը պետք է լինեն բավականաչափ ճկուն՝ ուղղորդման գործընթացի բարդությունները կարգավորելու և տարբեր իրավիճակներում գտնվող երեխաների կարիքները հոգալու համար: Բոլոր գործընկերները պետք է ապահովեն իրենց մասնակցությունն՝ ըստ իրենց դերերի և պարտականությունների և համագործակցության հիմքում ընկած սկզբունքը պետք է պատշաճ և հիմնավոր կերպով սահմանված լինի մեխանիզմի շրջանակներում:
- Անհրաժեշտ է ապահովել աջակցության և պաշտպանության ծառայությունների մատչելիությունը և խթանել այն:
- Ուղղորդման մեխանիզմի արդյունավետությունը կախված է պարտականությունների տարանջատման թափանցիկ և հստակ գործընթացից:
- Գոյություն ունեցող նախկին մեխանիզմների հիման վրա կարելի է ամրապնդել տեղական փորձը՝ այդպիսով ապահովելով ավելի սահուն գործընթաց: Կայունությունը պետք է լինի նպատակ:
- Երեխայի պաշտպանության գործողությունների արդյունավետության ապահովման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար վերանայել և թարմացնել մեխանիզմը: Անհրաժեշտ է նաև զուգակցել ուղղորդման այլ համապատասխան համակարգերը:

Սահմանապահը, առկայության դեպքում, պետք է ձեռքի տակ մշտապես ունենա հետևյալը.

- «պարտադիր ահազանգման» ծառայությունների կոնտակտային տվյալները, 24/7 երեխայի աջակցություն և այլ արտակարգ աջակցություն,



- ♦ պաշտպանության առկա բոլոր ծառայությունների (բժշկական, հոգեկան առողջության, իրավական, նյութատեխնիկական և այլն) և ծրագրերի (ինչպես ազգային պետական մարմինների, այնպես էլ քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների) կոնտակտային տվյալների լրիվ ցանկը:

Վերջապես, ցանկալի է, որպեսզի սահմանապահները մասնակցեն վերապատրաստման հատուկ դասընթացների՝ խոցելի անձանց և հատկապես երեխաների նկատմամբ պատշաճ վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ:

7. Տերմինաբանական բառարան



- APIS** Advanced Passenger Information System՝ Ուղևորների նախնական ծանուցման համակարգ
- I-24/7** Interpol checking system՝ Ինտերպոլի ստուգման համակարգ
- ILO** International Labour Organisation՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն
- IOM** International Organisation for Migration՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն
- NGO** Non-governmental organisation՝ Ոչ-կառավարական կազմակերպություն
- NRM** National referral mechanism՝ Ուղղորդման ազգային մեխանիզմ
- NSIS** National Schengen Information System՝ Շենգեն տեղեկատվական ազգային համակարգ
- PNR** Passenger name record՝ Ուղևորների անունների բազա
- SBC** Schengen Borders Code՝ Սահմանների մասին շենգենյան օրենսգիրք
- UNCRC** United Nations Convention on the Rights of Children (1990)՝ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա՝ երեխաների իրավունքների մասին (1990)
- UNCRSR** United Nations Convention Relating to the Status of Refugees (1951)՝ Միավորված ազգերի կոնվենցիա՝ փախստականների կարգավիճակի մասին (1951)
- UNODC** United Nations Office for Drugs and Crime՝ Միավորված ազգերի թմրամիջոցների և հանցավորություն գրասենյակ
- UAM** Unaccompanied minor՝ Անչափահաս երեխաներ, առանց ուղեկցության



Plac Europejski 6
00-844 Warsaw, Poland
Tel. +48 22 205 95 00
Fax +48 22 205 95 01

frontex@frontex.europa.eu
www.frontex.europa.eu

Printed version:
TT-02-17-558-HY-C
ISBN 978-92-95213-51-7
doi:10.2819/403016

PDF:
TT-02-17-558-HY-N
ISBN 978-92-95213-49-4
doi:10.2819/234110